

Բաժանորդագիրն կԱՆԻՒԻԿ՝ Թուրքիայ համար տարեկան 50 դր2, Ռուսիոյ համար 50 րուբլի, ուրիշ երկիրներու համար 12 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրու- թիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակադրոշմ կ'ընդունուի՝ 1 դր2, նոցը 34 փարայի հաշ- լով, կամ 100 դրուշի փոխարէն 115 դր2: ԾԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար գիմել:

Առ Տնօրէն-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱՆԱԿԱՆՅԱՆ
Պոլիս, Պաշէ-Կաթու, Թաշ Խան, քիւ 50

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Պ Ի Ր

درعليه ده بچه قوسنده طاش خاندہ
• نومروده «زاغیک» غزتهسی مدیری
بالاقاشیان حوونان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghik»,
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 34

ՇԱԲԱԹ

6 ՅՈՒՆԻՍ 1892

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՔ

Գ.

ՄԵԾ-ՀԻՆՔԵՆԱՐՔԵՆՆԵՆՆԵՆ ՔՈՇԱՆՆԵՆ

Հայր Տէր Յովհաննէս Աւագ Բահանայի
Հիւնքեարայէյնեան

(Շար. Գալստրդ քիւէն)

Առաջնակարգ պատրիարքներէն՝ Կա- րապետ Եպիսկոպոսի եղբայրն Գրիգոր վարդապետ, որ քարոզիչ էր այն ատեն Պալատու Ս. Հրեշտակապետ եկեղեց- ւոյն, Սաքայեան Սերովբէի Գէթէոն որդւոյն, ինչպէս նաեւ Յակոբոս պատ- րիարքին (1) դեռ սքեմ չառած՝ Քերա- կանութիւն դաս կուտայ եղբր, Պալա- տու դուրսը գտնուած վերոյիշեալ ա- տաղծի վաճառատան մէջ:

Օր մը Սաքայեան Սերովբէ կը տես- նէ որ խնկոտ եւ թափթփած խալիքախլը մէկն՝ ամէն օր կը յաճախէ խանութը ու խալապալիս կ'ընէ, խոյն ատաղձե- րուն մէջէն երկայն սրացեալ փայտ մը դուրս քաշելով զԳրիգոր վարդապետ կը դրոշմէ եւ խանութէն դուրս կը վնտէ, պոռալով. «Հայտէ՛, կորի՛ր սըկէ՛, եթէ անգամ մ'ալ գալլա լինիս, ոտքդ կը կտորեմ հա՛, վասն զի մեր տղայքը՝ դոր- ծերնուս աւարայ կ'ընես կոր », եւ այլն:

Եւ երբ Սերովբէ Սաքայեան՝ յետոյ քահանայ կը ձեռնադրուի, Գրիգոր վարդապետ՝ միշտ սոյն տըփոցն ու վեց գիւրը կը յիշէ ու կը յիշեցնէ եղբր Տէր Հօրը՝ Պատրիարքարանի մէջ, գլուխն երերցընելով՝ «կիտի՛ սէնի չարածըճիկ» ըսելով:

Միտքս կուգայ՝ սոյն Գրիգոր վար- դապետին մի գէպը:

Գրիգոր վարդապետ՝ Եզովբոսի պէս անշուք մարդ մ'է եղբր, կրնամ ըսել

(1) Պէտք է յիշել թէ՛ Յակոբոս Պատ- րիարքն ալ աշխուհականութեան ատեն ատաղձագործ է եղբր:

ճիշդ հակապատկերն հարադատին՝ Կա- րապետ Պատրիարքին, որ գեղեցկա- դէմ էր եւ իսաւաւոր:

Գրիգոր վարդապետ՝ Պատրիարք եղ- բորմէն կը խնդրէ, որ զինքն ի Կեսա- րիա Ս. Դանիէլի վանքը յղէ, կը հա- մակերպի Կարապետ Պատրիարք եղբօ- րը նախասիրական զգացմանցը, եւ այս առթիւ յանձնարարական մ'ալ կուտայ առ Ղուկաս վարդապետ, նոյն ժամա- նակի վանահայրն Ս. Դանիէլի վանուց:

Վանահայր-Առաջնորդն իւր հիւրը կը մեծարէ ու կը պատուէ, մանաւանդ երբ կը լսէ որ ժամանակին Պատրիար- քին եղբայրն է նորեկն, կը փութացնէ փառաւոր ճաշ, կը սարքէ յատուկ սեն- եակ, կը պատրաստէ փառաւոր անկո- ղին, ու կը հրամցունէ խոնջեալ ճանա- պարհորդ վարդապետն, որ ընդ փոյթ հանգստանայ իւր տեղն:

Գրիգոր վարդապետ կ'առարկէ թէ՛ Եկեղեցին չըսած կրնամք պառկելու երթալ:

Առ այս անայլայլութեամբ կը պա- տասխանէ Ղուկաս-Վանահայրն թէ՛ «Սգամալօլտա միլլէթին քիւլապադընը- նը, շարապընը քիւլէր եէյիպ իչէյօր- լարսա, Եկեղեցիսին տէ՛ վարսըն օնլար սէյօլէսինլէր »:

Սաքայեան Սերովբէի բարեկամներն ու համակրողք կ'ստիպեն ու կը թա- խանձեն զինքը քահանայանալ, եւ իւր ցեղային հոգեւորական յաջորդութիւնը շարունակել Տէր-Յովհաննէս անուամբ:

Կուտայ կամքը, կը վճռուի ձեռնա- դրութիւնը ի Պատրիարքարան, եւ կ'ո- րոշուի կատարել մեծահանգէս, 1825ին Պատրիարքարանի Մայր-Եկեղեցւոյ մէջ, ձեռնադրութեամբ Աստուածատուր Ե- պիսկոպոսին (1):

(1) Աստուածատուր՝ 1805ին Եպիս- կոպոս ձեռնադրուած է, եւ 1820ին 24 օր բանտարկուած:

1841ին Աստուածատուր Բ. Պօլսե- ցի՝ Պատրիարք ընտրուած է իբրեւ ա-

Նորին Արժանապատուութիւնը՝ յետ ձեռնադրութեան ի Մայր-Եկեղեցւոյ, փոխադրուած է ի Պալատ, եւ Ս. Հրեշ- տակապետ Եկեղեցւոյն Սթոռակալն ե- ղած է, ինչպէս Տէր Մեղքոն քահանայն՝ մշտնջենաւոր Աւագերէցն էր նոյն եկե- ղեցւոյն:

Այն ատեն Պալատու Թաղը Հայոց 1170 տուն կը գտնուէր, եւ Եկեղեցւոյ քահանայից թիւն էր քսան երկու:

Պալատու Եկեղեցւոյ միւլքէվէլիին էր նախ՝ Խօրասանճեան Յովհաննէս ամի- րան, յետոյ Քիւրքճիխանլեան Մկրտիչ ամիրայն, որ ամառն ի Գուրու-չէշմէ, ձմեռներն Այա-Գալուսի կողմերը ծովե- ղերեայ տունը կը բնակէր:

Աթոռակալ նորընծայ Տէր-Յովհան- նէսին քանի ծուխ ունենալը չեմ գի- տեր, բայց սա՛ գիտեմ որ ծուխերուն մեծ մասն՝ Հայ Կաթոլիկներն էին, որոց մէջ կը յիշուին Տիւզեանց Կարապետ, Յակոբ եւ Պօղոս Չլէշպիները, Ալլահ-

միրայական ընտրելի, եւ ի Բ. Դուռն ներկայացուելով՝ անմիջապէս վաւերաց- ուած է, մինչդեռ արհեստաւորաց ընտ- րելին եղած էր Մատթէոս Եպիսկոպոս, որ ապա պատրիարքացաւ ու կաթոլի- կոսացաւ: Աստուածատուր Սրբաւանի Պատրիարքութեան օրով է Հայ Ամիրա- յից եւ Հայ արհեստաւորաց խնդրոյն ծագումը:

Աստուածատուր Պատրիարք՝ Վէզիր- Խանի մէջ ի ներկայութեան Տատեան Յովհաննէս եւ Արզումանեան Արզուման Ամիրայից, արհեստաւորաց գլխաւոր- ները կը հրաւիրէ եւ ժողովրդեան կող- մանէ Ազգային Վարչութիւն մը կազմե- լու որոշումը կուտայ ու կը տեղեկագրէ ի Բ. Դուռն, որ 12 դեկտ. 1841 թը- ուականաւ հրովարտուեալ կը հաստատէ 27 արհեստաւորներէն կազմուելիք Ազգ. Վարչական Ժողովոյ մը գրութիւնը: Ամիրայից ազդեցութիւնը կամ միջամ- տութիւնը բնաւ չընդունելու թէու- թեամբ:

Սակայն տարիէ մը յետոյ սոյն ար- հեստաւորներէ կազմեալ վարչութիւնը չկարենալով շարունակել այլ եւ այլ պատճառներով, հրաժարական կը մա- տուցանէ առ Բ. Դուռն, եւ 15 նոյմ.

վերտեան Արարհամ և Մաթուս Ամիրայք, Ալէքսանեան Յովհաննէս, Չամբէեան Յովսէփ, Պիլէզիկեան Պողոս և ի Գառըզիւղ բնակեալ նշանաւոր դեղագործ Խուրտաճեան Պողոս աղայն, արդարեւ այր բարի և ազնուական:

Հին ատեն քահանայից ծուխերը ծախու կ'առնուէին ժամանակին Պատրիարքէն որուն կողմուտն էին քահանայից վախճանէն ետքը:

Տէր Յովհաննէս՝ խաղաղասէր քահանայ մը լինելուն համարաւ կը վայելէ ցարդ:

Բնաւ պարսպ ժամանակ չէր անցըներ: Աւելի Թուրք գրականութեամբ զբաղած է՝ քաջալերութեամբ ի Սեբաստիա թաղուած Իզզէթ Մուլայի(1):

Տէր-Յովհաննէս՝ Սուլթան Մահմուտին տաճկերէն քաղիքներ գրած ու հաւնեցուցած է ձեռնհաս իւլամէներու:

Հայր Յովհաննէս՝ Բէքի մարդ չէր:

Ըստ հին սովորութեան, ոչ Բէքիլէ կը խմէր, ո՛չ չուպուս կը քաշէր, և ո՛չ կռամբամբուր կը կոնծէր, այլ միայն սուրճ կ'առնուր, և խմած ժամանակ՝ երկայն ու փառաւոր մօրուքին վերայ չթափելու համար՝ մօրուքին կէսը՝ հա-

1842ին՝ վերստին կը յանձնուի Ազգ-Վարչութիւնը Ամիրայից ձեռքը:

Ամիրայից վերահաստատեալ վարչութիւնը՝ նախագահութեամբ Երկանեան Յարութիւն Ամիրայի, որ սեղանաւորաց գլուխ կարգուած էր և ակա-նակուս Իֆթիխարի նշան ունէր Արքայէն, ի ժողով կը գումարուր, և միաձայն կ'որոշէ Պատրիարքին հրաժարականը պահանջել: Յատկապէս երկու ամիրայնէրն կը զրկուին առ Աստուածատուր Պատրիարքն, և հրաժարականը քաղաքավարութեամբ կը խնդրեն:

Աստուածատուր ձանձրացած էր արդէն Պատրիարքութենէն, ուստի անձնական տկարութիւն պատուակելով՝ կը գրէ՝ հրաժարականն, 2 տարի և 7 ամիս պատրիարքութենէ զինի և կը զրկէ առ Բ. Դուռն, որ կ'ընդունի:

Աստուածատուր Պատրիարք՝ չինել տուած է Իւսկիւտարու Ս. Կարապետ հոյակապ եկեղեցին, որուն առաստաղներն, խաչկալը, վերնատունները, գաւիթը, և այլն, 1887 օգոստ. 2ին այրեցան և տալ վերաշինուեցան օժանդակութեամբ Ունճեան Վսեմ. հարազատաց:

(1) Իզզէթ-Մուլա՝ բնիկ Գանտիլիցի է:

Դրոմարար (սիքքէղան պաշի) Հաճի Ֆէթթաճ էֆէնդիէն լսած եմ թէ՛ Իզզէթ Մուլա՝ պատմական երկասիրութիւն մը թողած է. և ողան՝ Յուսուփաճ՝ կը պատմէր թէ՛, հայրն իբրեւ ժառանգութիւն, անկողին մը և գիրք մը միայն թողած է իրեն:

Իզզէթ Մուլայի քայրն ալ Տաճկաց մէջ հանձարեղ գրագիրութիւն մ'է եղած, և ունի մի քանի գեղեցիկ բանաստեղծական գրուածներ:

գած Էնքարին ծոցը կը թխմէ եղեր:

Թէ ի՞նչ պարագայի մէջ ստացած է Հիւնքեարպէլէնեան մականունը: Ահա-ւասիկ իրողութիւնը:

Զատիկի տօնի մ'առթիւ Գումագարուի նաւահանգստէն երկրորդաթի նաւակ նստած՝ ծուխերուն Տուռն-օրհնէք կ'երթար յՕրթագիւղ և ի Գուրուչէշմէ, նաւավարներն երկուքն ալ Հայ էին: Նաւակը Սարայ Պուրնուրի առջեւ հոսանքին բռնուած էր. Կայսրն բարեփառ Սուլթան Մահմուտ՝ նոյն պահուն Թօր-Գարուի պալատան պատուհանէն առջեւ նստած՝ կը լինի, և Տէր-Յովհաննէս քահանայն՝ քիչ մը հեռուէն նշմարելով՝ զնորին Վեհափառութիւնն, նաւուն մէջ յօտին կը կանգնի և կ'աղօթէ: Սուլթան Մահմուտ ևս Քահանայն տեսնելով, շատ կը հաւնի նորա մօրուքին, Զիլիֆթար Ալի ալան կանչելով՝ «չու փափազըն սաքալըն կիւզէլլինէ պաք» կ'ըսէ, և Տէր Հայրը նաւակէն հանել տալով, չլսլմ մը ոսկի կը շնորհէ: Տէր Յովհաննէս շնորհակալութեան ուղերձ մը կը գրէ և Նորին Վեհափառութեան կը զրկէ:

Սուլթան Մահմուտ կարգաւորով ուղերձը, շատ կը հաւնի, Յուսուփաճային հայր Բէշէճի դասէ Իզզէթ մօլլան կանչել կուտայ, «Պագ, պիր էրմէնի փափազը նէ եազմը» կ'ըսէ: Իզզէթ մօլլան, Տէր Հայրը չճանչնալ ձեռացընելով, «Իհթիմալի եօգ, պու գասի-տէյի էզպէր իթմիշ օլմալը տըր, էկէր քէնտիսի եազմը իսէ, կէլին հուզուրը Շահանշինկտէ օգուսուն, էկէր սօղրու օգուրսէ, քէնտիսին օլտուզունա չիւրիէ գալմազ» կ'ըսէ: Տէր Հայրը կուգայ Վեհ. Սուլթանին ներկայութեան այնպէս աղուոր կը կարգայ որ Իզզէթ մօլլան կ'զմայլի: Տէր Յովհաննէս յան-պատրաստից գափիլով ոտանաւոր մ'ալ կը գրէ խիստ գեղեցիկ:

Նորին Վեհափառութիւնը՝ նոյն միջոցին Պէզճեան Յարութիւն Ամիրայէն ալ նպատաւոր տեղեկութիւններ առնելով վերնագրեալ քահանայի մասին, Տէր Յովհաննէսին կը շնորհէ Հիւնքեարպէլէնի մականունը, որ ցարդ կը շարունակուի նորին պայազատաց մէջ: Տէր հօր յանպատրաստից մատուցած ուղերձէն ծագումն կ'առնէ Սալիսէ կամ Սէլիսէ(1) տաճկական բանաստեղծական գիտական զարդանունը:

(1) Տէր-Յովհաննէս՝ իւր ցեղին մէջ երրորդ Սերովքէն է, ուստի Սալիսէ՝ երրորդ-Սերովքէ կը նշանակէ, Հիւնքեարպէլէնեան ցեղին մէջ:

Հոգեւոր Տէր-Հօր թուրք Տօքթօր Կոպերնիկ էֆէնդի՝ անդրանիկ զաւակին անունը Սալիսէ-Յովհաննէս դրած է, ի յիշատակ պապուն անունն:

Երբ Հիւնքեարպէլէնեան քահանայն ի նաւակ դառնալով, այն ինչ նաւավարներն կը թիավարէին, նորէն կը վերադարձուի նաւակն և կրկին անգամ ի Կայսերական-Պալատ կը հրաւիրուի Քահանայն, որ կը խոստանայ նաւավարաց թէ՛ այս անգամ ինչ որ առնու, իրենց մէջ բաժնէ. և իրօք ալ վերստին մի և նոյն Կայսերական դրամական շնորհաց կ'արժանանայ. և երբ Հիւնքեարպէլէնեան վերջին դրամական ծրարն առնելով՝ կը դառնայ ի նաւ, և ըստ անսուտ խոստման, կը փորձէ երկու նաւավարաց մէջ կիսել, նաւավարք չեն հաճիր, այլ կը պահանջեն որ նախապէս քահանային համար տրուած Կայսերական պարգէն ալ իրենց տրուի, աւարկելով որ՝ իբր թէ քահանային խոստումն տարբեր էր. քահանայն խոստացած լինէր «թէ ի՞նչ որ առնեմ, զայն իրենց մէջ պիտի բաժնեմ», և ըն:

Հիւնքեարպէլէնեան՝ ի սկզբան կ'ընդգիմանայ, և չը համակերպիր նաւավարաց անճաշ առաջարկին: Նաւավարներէն մին յետոյ անսալով՝ քահանային, շնորհակալութեամբ կը տրամադրուի ընդունիլ, և սակայն միւս նաւավարը կը յամառի և մինչեւ վերջը կ'ընդգիմանայ, միշտ նախորդ պատճառաբանութիւնը յառնը քննելով:

Նաւավարք Միջագիւղի նաւամատոյցը մօտենալ չեն ուզեր, սպասելով որ՝ անպատճառ պէտք է որ դրամական կրկին ծրարներն իրենց յանձնուին:

Քահանայն նկատելով որ ծովուն վերայ խիստ է ընդդէմ խթանի աքոցել, և վախճալով ու ճարահատեալ՝ կը յանձնէ զայնո:

Բայց եկուր տես՝ որ՝ Օրթագիւղի նաւահանգիստը նոյն միջոցին գտնուող տաճիկ-իմամ մը՝ սկիզբէն մինչեւ վերջը սոյն տեսարանը ակնկառոյց կը դիտէ եղեր: Երբ նաւավարներն՝ նաւահանգիստը կը մօտենան, իմամը իրազեկ լինելով գործին խկութեանը, կը հրամայէ նաւավարոց՝ որ անիրաւութիւն չընեն, և ասոնցմէ առաջին ծրարն առնելով՝ կը յանձնէ Հիւնքեարպէլէնեան Տէր-Յովհաննէս քահանային, որ ընդունելով՝ սրտագին շնորհակալութեամբ կը մեկնի:

Պէզճեան Յարութիւն Ամիրային տաներէն՝ թէ և Օրթագիւղի նշանաւոր Տէր-Գալուստն էր, բայց ոչ նուազ կը սիրէր ու կը յարգէր նաև զՀիւնքեարպէլէնեան Տէր-Յովհաննէս քահանայն, իբրեւ պայազատութիւն՝ մեծանուն Գէորգ-Դպիրն:

Կր պատմուի թէ, Պէզճեան Ամիրայ՝ մեռած տարին՝ ամառն յօգափոխու-թիւն գացած է ի Վոսիփոր, Մէզար-

Պուրնու՝ զինւորական պահականոցին քովի տուներ : Նոյն տարին Հիւնքեարպէյէնտեան քահանայն ալ օգտւորութեան գնացած էր ի Սարեար, փոքրիկ տուն մը վարձելով :

Ամիրայն շատ չկրնալով մնալ ամառանոցի համար վարձած տանը մէջ, կանչել կուտայ քովը զՀիւնքեարպէյէնտեան, և կը խնդրէ որ՝ առնէ չօլուխ-չօնուխը ու գոյ տեղաւորուի ընտանեօք և պարագայիւր իրեն վարձած ընդարձակ և ծովահայեաց սպարանին մէջ և մնայ անդ մինչեւ Գասըմ, խնդրելով միանգամայն՝ որ ի Սարեար օգտւորութեան գնացող Հայ ժողովրդը դեան հոգեւոր պիտոյն յանձնածէ և միւրթարէ, մինչեւ որ ասոնք ձմեռը վար իջնեն իրենց տեղը : Խստիւ կը պատուիրէ Հիւնքեարպէյէնտեան քահանային՝ որ բնաւ Պօլիս չիջնէ, և կը խոստանայ՝ առ այս պէտք եղած Պատրիարքական հրամանագիրը փութացնել :

Արդարեւ Պատրիարքարանէն անմիջապէս նոյն մտօք պաշտօնագիրը կը հասնի ի Մէղար-Պուրնի առ Հիւնքեարպէյէնտեան :

Հին տունն՝ ազգային օրէնք չկար, ժողովներով չէին տնօրինուեր ազգային ընթացիկ գործերն : Ամէն բան Պատրիարքին բարեհաճութենէն ու քահանայէնէն կախեալ էր :

Վերջապէս Մեծ—Հիւնքեարպէյէնտեան Տէր-Յովհաննէս Քահանայն՝ շուրջ տասներեք տարիներ քահանայագործելէ յետոյ, 1837ին վախճանած է ի հասակի 63 ամաց : և թաղուած է տիրնէ-Գարուի գերեզմանատան մէջ՝ առ ընթեր իւր նախնեաց :

Կը ներուր՝ մեզ վերջին դիտողութիւն մը կցել այս առթիւ :

Եւրոպայի մէջ Տէքարդի գանկն, Վօլգեռի ցուպը, Քանդի կեղծամը, Ժան-Ժաք Ռուսօյի բաճկոնակը, Մեծն-Նաբոլէոնի գլխարկը, Մոլիէրի թեւաթուր հազարաւոր փրանքներ կ'արժեն, սակայն ըստ որում մեր Ազգին մէջ ամենէն երեւելի գրագէտին երկերն անգամ կուտ մը չեն արժեր, ցարդ հետաքրքիր չեն եղած իմանալ թէ բուն Հիւնքեարպէյէնտեանի (1) և ազգակից Գէորգ-Դարի և նմանօրինակ հին գրագիտաց թողած ձեռագրերն ո՛ր կը մնան, և որո՞ց ճարակ եղած են :

(1) Ողբացեալ առաջնակարգ տպագիր ծանկի Արամեանը փափաքած է որ՝ Սալիսէի, այսինքն, երջանկայեղատակ Հիւնքեարպէյէնտեանի գրական գործերն հրատարակուին :

Դ.

ՏԻՐԱՅՈՒ—ՄԻՔԱՅԷԼ

Ընդ հովանեալ Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյ երկար տարիներ գորդ ու ապրողներէն էր նաեւ Տիրացու-Միքայէլ, որ ծնած է ութեւտասներորդ դարու երկրորդ կիսոյն սկիզբը : Թէև մուսուլմանութեան տրուած, և սակայն գնահատութեան արժանի անձնաւորութիւններէն մին է Տիրացու Միքայէլ, որոյ ժողովրդական անմեռ տաղաչափութիւններն յուշագրաւ տեղ մը կրնան գրաւել Ազգային մատենադրութեան մէջ, եթէ նախաձեռնարկ բանասէրն օր մը հաւաքելով զայնս՝ ի լոյս ընծայէ :

Սոյն տաղաչափութիւններէն մի քանի գրական պատուիր՝ իրեւ նոյն, մեր անձնական յուշատետրին մէջ պատրաստ կը գտնուէին, զորս հրատարակութեան տալ կը փութամք՝ հեղինակին քանի մը կենսագրական գծերով հանդերձ, յուսալով որ ոչ միայն ճաշակ մը տուած կը լինիմք այսու նորա նկարագրին, այլ միանգամայն գրգիռ մը՝ հետաքննին բանասիրին :

Տիրացու-Միքայէլ բնիկ Պատրացի է, ծնած 1760ին ժամանակները, և ի Պոլիս գաղթելով՝ երեսնականայր կ'ընտրէ Պալատ, Ամիրայից երկրորդ ստանըն (1), և կը հաստատուի թաղին դուրսը Տէյրիմէնի, կամ լաւ ևս Հացագործ—Համարձու մին փուռն ու ջաղացքը, ո՛ր անցուցած է պանդխտութեան գրեթէ բոլոր տարիներն :

Սակայն Միքայէլին մշտնջենական կայանը՝ ջաղացքը չէր. գրեթէ հանապազօրեայ ժամադրավայրն էր Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ բակը ուր կը դիմէր ընդ այգն այգուն և երեկոյին ի ճայն կոչնակի, իսկ ցորեկները ընդհանրապէս ճաշի կը հրաւիրուէր լուսահոգի Մեծ Հիւնքեարպէյէնտեան քահանայէն, որուն սիրականն էր :

Հին Պալատցիներէն ո՛վ չգիտէր, ո՛վ չտիրէր Տիրացու Միքայէլը, որ իւր ճաղատ գլուխը չալմա (2) կը կապէր, հագուստին վրայէն երկայն ապա մը կը հագնէր, որ բնաւ հիննալիք չունէր, և մշտանորդ ֆօսիւմն էր, բայց և այնպէս՝ սոյն անպաճոյճ հանդերձով իսկ

(1) Ի Խազդիւղ բնակեալ ամիրայից ցուցակը՝ իւրաքանչիւրին համառօտ կենսագրութեամբ՝ պիտի հրատարակուի «Մաղիկի» յառաջիկայ թուով :

(2) Չալմային ի Պոլիս բազէն կ'ըսեն վաճառականական լեզուաւ. իսկ ի գաւառս, չալմա կամ շեղալքա, որ չորս կանգուն երկայնութեամբ ներկուն կուտ մ'է, առ հասարակ սեգոյն. իսկ նաւավորք և ձկնորսք կ'ընտրեն լաճիւնս գոյնը :

ամենուն համակրանքն ու սէրն առ ինքըն ձգած էր Տիրացուն :

Կերած հացին դրամ չէր տար Միքայէլ. Համարձու մին փուռէն ձրիաբար կը տրուէր իրեն :

Բաղդին հեգնութեանը մատնուած մարդ մ'էր որ մի տեսակ փիլիսոփայութիւն կը ծախէր :

Առանց տառապալի՝ սքանչելի մարգարտի պէս գիր կը գրէր : Օրերուն մեծ մասը կը զոհէր՝ վարդապետաց համար Քարոզագիրք օրինակելով, քահանայից գրերը պատրաստելով :

Ասոնցմէ վատ, տարին երկու հարիւր զուրուչն աւելի գումար մ'ալ բարեպաշտ անձանց առատաձեռնութենէն կը շահէր, ամէն առաւօտ և երեկոյ Պալատու Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ դուռը կենալով, առանց ձեռք բանալու :

Պալատու ժողովուրդը ջերմեանդէ, և Հրեշտակապետ եկեղեցին՝ ջերմեանդներու ժամադրավայր մ'է առաջուց ի վեր : Լուր օրերն իսկ՝ 200 ժողովուրդ կը յաճախէ անդ : Ուստի հարուստ և արհեստաւոր՝ անպատճառ բան մը պիտի վճարէին մեր Տիրացու Միքայէլին :

Տիրացու Միքայէլին ամենէն մեծ եկամուտն էր սակայն օրինակելի բաւականասիրութիւնն :

Օր մը Տիրացու-Միքայէլին սիրտը հեղձալ կ'ուզէ :

Սրտին այս գողտիւքը, կամ լաւ եւս, ստամոքսին սահանջքը անպատուակ կը յայտնէ Հիւնքեարպէյէնտեան հօր, երբ սա հետեւեալ աւուր համար գինքն ի ճաշ կը հրաւիրէ :

Հիւրասէր և բարեսիրտ քահանայն սիրով կը խոստանայ, զարիւղ Միքայէլին մէտէին ուզած հեղձան պատրաստել տալու ի տան :

Հետեւեալ օրն՝ երբ Տիրացու Միքայէլ կ'երթայ Հիւնքեարպէյէնտեանի տունը և խորիմ կամ հէլվա չսեպներ, իսկոյն կ'զգայ թէ՝ Տէր—Հայրը մուսուլման է պատրաստել տալ զայն, ըստի ճարտարագիւտն Պատրացին՝ բանաստեղծութեան մը կը դիմէ՝ Դաւթի քընարէն փոխ առնելով, Կարմիր թուզթ մը ուզելով, փրան նախամարգարէին հետեւեալ խորհրդաւոր պարբերութիւնը կը գծէ՝ տանգլուխ գրերով և ճարտար մտածութեամբ :

« ՅԻՇԵԱ ԶԲԱՆ ԵՍԱՍՅԻ ԴՈ, ՅՈՐԵԻ ՅՈՒՍՅՈՒՅԵՐ ԶԻՍ. »

Պալատցի Խուրճալ քահանայն անմիջապէս կռահելով Միքայէլի սրախօսութիւնն, կը յիշէ՝ բրած խոստումն, ու վաղվաղակի կը հրամայէ՝ որ Տիրացու-

Միքայէլին ուղած հեղինակն պատրաստուի:

Պալատու եկեղեցւոյ շինութեան տարին, 1835 թուականին, Տիրացու-Միքայէլին 75 տարեկան էր կ'ըսեն, այն ինչ Գառնիկի Հիւնքեարայէլէնտին՝ հազիւ հնգետասանամեայ՝ կը յաճախէ եղեր Միքայէլի քով՝ գրականութեան նկատմամբ ներշնչումներ ու հովեր առնելու համար:

Նոյն տարին Տիրացու Միքայէլին համար ամենէն աւելի ժողովրդական տարին էր, յորում բաւական դործօն դեր կատարած է, նոյն եկեղեցւոյ շինութեան համար՝ կիր կրած, կռնակովը քար չալիւած, դողդոջուն ձեւերով խորասան ծեծած է:

Ոչ միայն այսչափ: Այլ ուրիշ բարեօրէններն ալ ի գործ մղելու համար՝ սրտաշարժ բայց աշխոյժ գեղեցիկ տաղեր, երգեր կը յօրինէ եղեր:

Եկեղեցւոյ շինութեան ի նպաստ՝ սափրիչ արհեստաւորք տաճարին դռնը գանձանակ մը պիտի կախէին: Մեր Միքայէլին կը խնդրեն որ ոտանաւոր մը գրէ, գանձանակին վրայ փակցուելու համար:

Տիրացու Միքայէլ ամենայն սիրով և յօժարութեամբ բնութենով սոյն հոգեւոր առաջարկ, վայրկեանական տպաւորութեան ներքեւ կը գրէ հետեւեալը.

«Պանծա՛ Պալատ փառօք մեծաւ, Բո սուրբ պայծառ եկեղեցեաւ, Անունն ասի Հրեշտակապետք, Օրհնեալ հօտ իւր պատուեալ և պետք, Ո՛վ ժողովուրդ հաւատացեալք, Ի բնէ անտի էք գովեցեալք:

(1) Որք յայս կրպակս առնէք ելմուտս, Ի գանձանակս կուտեցէք կուտս, Պալատու սուրբ եկեղեցին, Հրեշտակապետք ընդ Ձեզ լիցին, Հոգեվար օրն զհոգիս ձերոց, Տարեալ մուծցեն յարիս արդարոց, Յորժամ դայ Տէրն ի դատաստան, Ածցէ զՁեզ ի դարաստանս:

«Վարպետ սափրիչ վարսավիրայ, Զմարդիկ ի դուրս հրաւիրեա՛ւ:»

Պատրացի Տիրացուն զուարճաբան էր և սրախօս:

Օր մը յիւսկիւտար հիւր կ'երթայ, տանը մէջ միւսկներէն կը պաշարուի և անքուն մնալով կը գրէ.

«Ի Պալատէ դէպ յիւսկիւտար, Ելեալ գնացի առնել դադար,

(1) Այս տողը կը պակսի յուշատետրին մէջ:

(1) Եարաղս ձգուած էր դէպ ի հարաւ, Բիրէն խածնէր ամէն քարափ, Զիւնքի գլխուս օրբան սաղ էր, Թախապիքին հոն ուրախ կը վազէր, Զախ ականջիս դրոխ դռնէն, Սիվիսիւնէկը չալէր զուռնէն, Մէկն ալ խածնէր թեւիս սախաւ, Պէրպէր եղաւ ինծի համար. Ծաղիկս ըրիր կարմիր պախամ, Բեզ նզովէ չըփտի խախտմ. (2)»

Տիրացու Միքայէլի գլուխն, որպէս յիշեցինք ի վեր անդր, սաղ էր: Երբ օր մը՝ գլուխը չալման կապած՝ Տէվէ-խանէին տղէն կ'անցնէր Գարակէօմ-րիւկի եկեղեցին երթալու համար, ուղտին մէկը՝ Տիրացուն չալման գլխէն կը թռցնէ. Միքայէլ գլխաբաց կը մնայ, ու սաստիկ նեղանալով, բարկանալով ու սրտմտելով՝ կը գրէ ի մէջ այլոց, հետեւեալ երկտողն՝ ուղղեալ առ ուղտն չալմայարած.

«Ուղերդ մաշեն քարոտ լեռներ, Զուր չի գտնես աղբիւր կէօլերն», և լին:

Ո՛ւր է հիմայ Պատրացւոյն սոյն պատմական չալման, և ո՛ւր կը մնան անոր թողած ներշնչուն բանաստեղծութիւններն:

Հարկ չկայ ըսելու թէ, կամ կորսուած է, և կամ էջմիածնայ Թանգարանը ու Մատենադարանը տարուած են, ձեռամբ չարականագէտ Պալատցի Տիրացու Կարապետի Պաղտատեան, (և ո՛չ, ըստ Ե. Տնտեսանի հրատարակութեան, Դերձակեան):

Թէ ո՛վ է այս Տիրացու Կարապետը, պէտք է զայն եւս ծանօթացնեմք մեր ընթերցողաց:

Տիրացու Կարապետ՝ յայտնի չարականագէտ Մինէճեան Սիմօնի հօրեղբայր՝ Պալատցի երեւելի չարահներգու Մինէճեան Յովհաննէս վարժապետի(3) աշակերտներէն է, հնգիցս յէջմիածին գընացած, և եօթն տարիներ (1867—75) անխափան դաստառութիւն ըրած է անդ:

60-64ին, երեք ու կէս տարի ալ յերուսաղէմ նոյն պաշտօնը վարած է:

Այս անձ այնքան նախանձախնդիր եղած է Հայաստանեայց եկեղեցւոյ երգեցմանց իսկականութեան և անվրէպ պահպանման, մինչ զի Միւռն օրհնէից

(1) Տող մ'ալ հոս յուշատետրէս վրիպած է:

(2) Ծարունակելի վերջին տողերը չունիմ: Ծնորհակալ կը լինէինք, եթէ պակաս տողերը գիտողները մեզ հաղորդէին:

(3) Որ Օրթագիւղէն իւր բնակութիւնը փոխադրած էր ի Պալատ:

յատուկ — Դ. Զ. Հայր Ամենակալ — Շարականին րուն եղանակին ի խնդիր 1858ին յԱշխատար, և 1864ին ի Սիւ ուղեւորած է, որպէս և յէջմիածին Տ. Տ. Մատթէի և Գեորգայ կաթողիկոսութեանց օրերով, բայց խնդրելին դժբաղդաբար չէ ձեռք բերած, և կը խոստովանի իսկ թէ՛ այժմու ձայնագրեալ Շարականին — Հայր Ամենակալ — ի երգարանութիւնը իւր յատուկ նախնական եղանակը չկրէր:

Տիրացու Միքայէլի կենսագրական մասերն փափաքելի էր որ ամբողջութեամբ ի լոյս ընծայէինք. սակայն մենք՝ մեր գիտցածն ուրուագրեցինք. մնացեալն՝ ժամանակացաց կոչում կ'ընենք հրատարակելու, խնդրելով որ յայտնեն թէ՛ վախճանման թուականն իրօք 1847 է՞, թէ՛ աւելի կանուկ:

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրաւերի մը համաձայն, Ս. Պատրիարք Հայրը շարաթ օր Կայս. պալատ դնաց Պատրիարքարանի գործակաւտար Յրէնիկեան Արքահամէֆէնտի հետ և տեսակցութիւն մը ունեցաւ Կայս. պալատան առաջին քարտուղար Վսեմ. Սիւրէյա փաշայի հետ:

Նորին Սրբազնութիւն, շարաթ մը ի Մաքրիքիւղ իւր բնակարանը մնալէ յետոյ, երկուշաբթի օրէն սկսաւ Պատրիարքարան յաճախել, և շարթուս նախագահեց Բաղադական ժողովոյ:

— Պրուսայի Առաջնորդ Գեր. Բարթոլոմէոս Սրբազան Արքեպիսկոպոս կիւրակէ առաւօտ Ս. Պատարագ մատոյց Խապիւղի Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն մէջ ի հանդիստ հոգւոյ Գալ-Փայեան Որբանոցի Հիմնադիր Սրբուհի Մայրապետի և քարոզ խօսելով դրուատեց բարեյիշատակ հանգուցելոյն առաքելի հոգին, բացատրելով նաև նորա հիմնած հաստատութեան բարձր նշանակութիւնն ու վսեմ նպատակը:

Ի վերջոյ ջերմ բարեմաղթութիւններ ըրաւ վսեմ թանկագին կենաց և արեւատութեան Օգոստափառ Սուլթանին որ Որբանոցին մեծագոյն Բարերը հանդիսացած է: Ն. Սրբազնութիւն գիշերը Որբանոցին մէջ անցունելով, կատարեց նոյն հաստատութեան որբուհիներէն Օր. Նազիկի պսակադրութիւնն՝ ընդ Խաչիկ էֆ. Բիւլահլեանի, քարտուղար Որբանոցին:

— Մայիս 15ին Բաղու դացեր են Զմիւռնիոյ Առաջնորդ Գեր. Ներսէս Ծ. վարդ. Արսլանեան և Տիգրան էֆէնտի Կիւմիւլիէրտան: Յաջորդ օրը այցելեց

են Բալախանի նախարարները : Կիւրակէ օր Գեր . Արսլանեան սրտառուէ քարոզ մը խօսեր է : Նոյն օրը ճաշ տրուեր է ի պատիւ Թուրքիացի հիւրերուն :

— Գոհութեամբ կը ծանուցանեմք թէ Վեհ . Սուլթանը գնահատելով ընկերային կեանքի թարգմաններէն Արիկեան Մեծ . Միհրան էֆէնտիի՝ Օսմանեան լեզուի գրականութեան մատուցած ծառայութիւններն իւր ցարդ յօրինած 45 կտոր օգտակար գրքերով , բարեհաճած է Դ . կարգի Օսմանիյէ պատուանշան շնորհել նմա : Արիկեան էֆէնտի արդէն ունի Սանիէի աստիճան և Դ . կարգի Մէճիտիյէ պատուանշան :

— Արժ . Տ . Ոսկի աւագ քահանայ Օհանեան երկուշաբթի օր Պրուսայէն մայրաքաղաք եկաւ :

— Ռստոսթոյի Հոգեւոր Հովիւ Գեր . Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան երկուշաբթի երեկոյ մեկնեցաւ յիւր պաշտօնատեղին : Զորեքշաբթի օր Ռստոսթօ վերադարձաւ նաև Տոքթ . Նէվրուզեան էֆէնտի :

— Տաքազ շաբաթաթերթի մէջ կը կարդամք թէ , Բագուի Հայ երիտասարդութիւնն հեռագիր մ'ուղղելով ի Թիֆլիզ , Նիկոմիդիոյ առաջնորդ Գեր . Ստեփան եպիսկոպոս Յովակիմեանն ի Բագու հրաւիրեր է մի քանի օր հիւր մնալու , սակայն հեռագրին ժամանման պահուն Յովակիմեան Սրբազան արդէն մեկնած է եղեր Թիֆլիզէն ի Կ . Պոլիս :

— Բեդրսպուրկի համալսարանի բնօրոքէսօր հայագէտ Ն . Մարրն Կովկաս գացեր է՝ էջմիածնայ շրջակայքը և Շիրակի զանազան կողմերը հնութիւններ հաւաքելու նպատակաւ :

— Ուսումն . Խորհրդոյ պաշտօնի վերայ գտնուող անդամք զիր մը մատուցանելով Քաղ . Ժողովոյ , ինչ ինչ պատճառաբանութեամբ հրաժարական մատուցած էին : Ժողովը նկատելով որ նոյն անդամոց յուզած խնդիրներն իրենց իրաւասութենէն դուրս են և իրենց հրաժարագրոյն ոճը պատշաճութեան հակառակ է , տեղի չգտաւ նոյն խնդիրները նկատողութեան առնելու և ընդունելով իրենց հրաժարականն , պաշտօն յանձնեց ժողովականներէն Պէրպէրեան Ռէթէոս էֆէնտիի , զոր նախորդ որոշմամբ արդէն կոչած էր յանդամակցութիւն Ուսումն . Խորհրդոյ , նոյն խորհրդոյ նորոգ կազմակերպութեանը համար ընտրելիներ սահմանել և առաջարկել Քաղ . Ժողովոյ :

— Նիկոմիդիոյ թեմերէն Արսլանպէկ գիւղի հրկիզեալ եկեղեցւոյ և վարժարանին վերաշինութեան վերաբերեալ օրինական նախնական գործողութիւնք

ամրողացած լինելով , Քաղ . Ժողովը որոշեց շինութեան հրովարտակը խընդրել կայս . կառավարութենէն :

— Քաղ . Ժողովն՝ Զնկածագի կրօնական և Բաղաքական ժողովոց նորոգ ընտրութեան մէջ օրինական թերութիւններ գտնելով , որոշեց լրացնել տալ զայնս :

— Զմիւռնիոյ ազգայիններէն Մեծ . Յակոբ էֆ . Զէվահիրճեան բարեսիրտբար յանձն առած լինելով իւր անձնական ծախիւք վերաշինել Գասապայի ազգային վարժարանը , Քաղ . Ժողովը որոշեց խնդրել նոյն վարժարանի շինութեան կայս . հրովարտակը :

— Տնտեսական Խորհուրդը չորեքշաբթի օր զբաղեցաւ Գուզլուճուզի , Թօփ-Գաբուի , Խաթալիզի , Սամաթիոյ և Իւսկիւտարի Ս . Եկեղեցեաց և Պաղտատի ու Սեբաստիոյ ազգային հաստատութեանց վերաբերեալ կտակային և հաշուական խնդիրներով : Խորհուրդը խորհրդակցութիւն մը կատարեց նաև մայրաքաղաքի Ս . Եկեղեցեաց քանչելէրի տրոց , ինչպէս և ազգ . տրոց նկատմամբ և ինչ ինչ տնօրինութիւններ ըրաւ :

— Ի Թիֆլիս մայիսի 24ին Վանքի Մայր Եկեղեցւոյ բակին մէջ հանդիսատի կերպով բացուեր է Հանգուցեալ Պետրոս Շանչեանի մահարձանը : Ս . Երուսաղէմայ Լուսարարապետ Գեր . Սահակ եպիս . Խապայեան նոյն օրը Ս . Պատարագ մատուցանելով , Հոգեգալըստեան տօնի առթիւ գեղեցիկ քարոզ մը խօսեր է , բացատրելով , կ'ըսէ՝ Նոր-Պար , « քրիստոնէական այդ տօնի նշանակութիւնը և գեղեցիկ կերպով այդ տօնը կապելով հանգուցեալ Պետրոս Շանչեանի մահարձանի բացման հետ » :

« Աստուծոյ հոգին նրա մէջը չէ , ով որ շատ լեզուներ է խօսում , շատ գիտութիւններ ունի , շատ հարստութիւններ ի տէր է , և այլն , այլ նրա մէջն է , ով ճշմարիտ քրիստոնէայ է , առաքինի , բարեգործ է , ով մարդասէր է , ընկերասէր է . . . և աստուածային այդ հոգին ապրում էր հանգուցեալ Պետրոս Շանչեանի մէջ և նա ճշմարիտ քրիստոնէայ և առաքինի մարդ էր իւր կեանքով և իւր գործածներով մէջ : Արքայապետ քարոզիչը անձամբ թէպէտ և չէ ճանաչել Պետրոս Շանչեանը , բայց նրա աշակերտներով , նրա գրուածներով ճանաչել , յարգել և սիրել է այդ մեծ քրիստոնէայ ուսուցիչը : »

Պատարագէն յետոյ , եկեղեցական դասը հանդէսով Շանչեանի գերեզմանի քով երթալով , որ կը գտնուի Այվազօփքի Գարրիէլ Արքեպիսկոպոսի և Հասան-Ջալալեան եպիսկոպոսի գերեզմաններուն կից , կատարեր է հոգեհան-

գըստեան պաշտօնը : Գերեզմանին վրայ ճառախօսեր է Պ . Գրիգոր Իզմիրեան , կառուցուած արձանաքարը , արդիւնք հանգանակութեան , շրջապատուած է եղեր երկաթեայ վանդակով :

— Քաղ . Ժողովը որոշեց հրահանգ տալ Պաղտատի նորընտիր Առաջնորդական Տեղապահին որ Գաւառական Ժողովոյ ընտրութիւն կատարելով , արդիւնքը տեղեկագրէ :

— Արտաքին գործոց պաշտօնէութեան հպատակութեանց դիւանի Տընօրէն Վսեմ . Օհան էֆ . Պաղտատեան հինգշաբթի երեկոյ Բարիզ մեկնեցաւ արեւելեան ճեպընթաց կառախուսքով :

— Կեսարիոյ Առաջնորդ Գեր . Տըրդատ Մ . Վարդ . Պալեան վաղն առաւօտ հանդերձեալ է Ս . Պատարագ մատուցանել ի Ս . Թագաւոր Եկեղեցւոյ Գատը-գիւղի :

— Տօք . Գասապեան էֆ . Ազգային Հիւանդանոցի Յիմարանոցի մասին բժշկի կարգուած է :

— Եէնիգարուի Աւագերէց Արժ . Տ . Խաչատուր քահանայ Տ . Գաբրիէլեան , այս տարի ևս (1297 տարի) հանգանակութեան ձեռնարկելով ի նպաստ Ազգ . Հիւանդանոցի , 2592 քիլօ հացազնի համար նուէր հաւաքած է :

— Գանձակէն Նոր-Պարին կը գրեն . « Երեք օր Սրբազան Խապայեանը հիւր էր մեր քաղաքում : Սրբազան Հօր ներկայութիւնը մեր քաղաքում ընդհանուր հետաքրքրութիւն էր շարժել և ամենքի խօսակցութեան միակ նիւթը Սրբազան Հայրն էր . ամէն դատակարգի մարդիկ շտապում էին այցելել Սրբազան Հօրը . շաբաթ երեկոյեան և կիրակի , պատարագին , Սրբազանը քարոզ խօսեց , երկուշաբթի մայիսի 18ին , Սըրբազանի Թիֆլիս ուղեւորելիս , կայարանում բաւական մարդիկ էին հաւաքուել Սրբազանը ճանապարհ դնելու համար : »

— Նոր-Պարի մէջ կը կարդամք :

« Ներսիսեան դպրանոցի Հոգաբարձութիւնը վճռել է անցեալ տարւոյ նման այս տարի էլ ամառնային արձակուրդների ժամանակ աշակերտները դպրոցական ուղեւորութեան ուղարկել ուսուցիչ պարոն Իսահակ Յարութիւնեանի առաջնորդութեամբ : « Արձագանգի ասելով , կեդրոնաւորին լինելու է Քարվանսարայ գիւղը : Աշակերտներն այցելելու են Հաղարձինը , Դիլիճանի ձորի բոլոր վանքերը , Սեւանն , և այլն : Ուղեւորութիւնն սկսուելու է մօտաւորապէս յունիսի 10ին և տեւելու է մինչեւ օգոստոսի 25ը :

— Երգիչ Պ . Ներսէս Շահլամեան Իտալիայէն դարձած է ի Թիֆլիս և այս օրեր նուագահանդէս մը պիտի տայ :

— ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐՈՒ վրայ համառոտ տեսութիւն մը և նոցա ցուցակն, բանասէր եկեղեցականի մը կողմանէ յօրինուած, պիտի հրատարակուի «Ծաղիկ»ի յառաջիկայ թուով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի անգլիական նոր դեսպանը Մարտի վեհապետին առաջարկեր է եզրիպտոսի նման խառն դատարաններ հաստատել, մաքսային դիւրութիւններ շնորհել անգլիական գերհիւպատոսութիւն մը հաստատել ի ֆէս՝ անգլիական դուրջ պարզելու արտօնութեամբ որ անկարելի է Մարտի մէջ, Թանձէրէն Մոկատար հեռագրութեւ մը շինելու արտօնութիւն տալ անգլիական ընկերութեան մը, Մարտի կառավարութեան հաշոյն ամրոցներ շինել ի Թանձէր: Առ այս Մարտի վեհապետը երեւելեաց ժողովմը դուժարեւ է: Կ'ըսուի թէ դեսպանին առաջարկները մերժուեր են և դեսպանն ալ իւր յարաբերութիւնները խզեր է:

— Ամերիկայի Միացեալ-Նահանգաց Բենիլիւմիոյ դաւառին Ուայլ Սիդի քաղաքն որ մեծաքանակ քարիւղ կ'արտադրէ, յորդառատ անձրեաց պատճառաւ ամբողջովն ողողուեր է շրջակայ փոքր քաղաքներով հանդերձ: Հեղեղներէն քլուած քարիւղի տակաւները շփուելով բռնկեր և իրենց ճամբուն վրայ գտնուած ամէն ինչ, կ'ամուրջ տուն, շէնք, քաղաք, ևն, հրոյ ճարակ ըրեր են: 200է աւելի անձինք մեռեր և շատեր վիրաւորուեր են: Վնասը կը հաշուի մէկ քանի միլիոն տոլար:

— Նորվիկիոյ Ազգ. ժողովը 49ի դէմ 63 քուէով որոշեց նորվեկեան ուրոյն հիւպատոսութիւններ հաստատել:

— Պարսկաստանի մէջ հետախուրդ կը շարունակուի:

— Պուսքեթ քաղաքն այսուհետեւ «արքայական մայրաքաղաք և բնակավայր» տիտղոսներն ալ պիտի կրէ կայսեր հաւանութեամբ:

— Ամերիկայի Միացեալ-Նահանգաց Հանրապետութեան նախագահին յառաջիկայ ընտրութեան համար պայքարըն այժմէն սկսած է: Հանրապետական կուսակցութիւնն Միլէնթոլիսի մէջ համախմբուած մը կ'առաջարկուի, որոշեր է ընտրել արդի նախագահը Զօր. Հարինսըն:

— Բամբի երկրին մէջ իւր սեփականութեան իրաւունքները պաշտպանելու համար Չինոս կառավարութիւնը զօրք զրկել սկսեր է հոն: Ռուսիա զայս իմանալով պատրաստութիւններ կը տեսնէ:

— Չինաստանի կայսրը Փարիզու դեսպան Զօր. Չէնկ—Փիլթոնկ մարքիզըն իւր բոլոր ատիճաններէն զրկեր և հանրային պաշտօններէ արտաքսեր է, իւր դիրքէն օգուտ քաղելով անձնական լիտիստութիւններ կնքելուն համար: Մարքիզը պիտի բանտարկուի մինչեւ որ գոհացնէ իւր պարտապահանջները:

— Քաբէրա կղզին, ուր թաղուած է Կարիպալտի, ամբողջովն գնուելով Իտալիոյ կառավարութեան կողմանէ, զինուորական ու նաւային կեդրոն մը պիտի լինի:

— Շուէշի թագաւորը Գերմանիա այցելելով, ջերմ ընդունելութիւն գտաւ Գերմանիոյ կայսրէն Բոցտամի պալատան մէջ:

— Դանուբ գետը յորդել կ'սպառնայ, Վիէնայի շրջակայքը շարունակ անձրեւ կը տեղայ մէկ քանի օրէ ի վեր և գետն ալ բաւական բարձրանալով, աւերմունք իսկ դործած է:

— Տանուէի թագաւորին 6000 հըրացան ծախած են Անգլիացիք:

— Իսպիլոյ նախարարապետը Պ. Նօլիդէի վերջապէս կրցաւ իւր առժամեայ ելմտացոյցը 6 ամսուան համար քուէարկել տալ զինուորական արտասովոր ծախուց հետ: Այժմ նախարարութեան կը մնայ զբաղիլ միայն երեսփ. ժողովոյ լուծման և ընտրութեանց խնդիրներովը:

— Պուլկարիոյ Ֆերտինանտ իշխանը անցեալ շաբթու Սիովոնիոյ Պալմորըլի դղեկին մէջ Անգլիոյ թագուհոյն հետ տեսակցելու պատիւն ունենալով, շատ գոհ մնացեր է: Լոնտոն վերադարձին, Լորտ—քաղաքապետին հետ ճաշեց: Պուլկարը շատ ուրախ կը լինին իրենց իշխանին շնորհուած ընդունելութիւններէն:

— Ռուսացիա 75 միլիոն ֆրանքի լիտիստութիւն մը կը կնքէ, որ Պերլինի մէջ ստորագրուած է:

— Մարմնի Միացեալ-Նահանգաց մէջ չկարենալով իրենց բազմակնութեան ազանդէն ի գործ դնել, Մէքսիկա դալթեր են ուր 100 000 անգլիական արտավոր հող ձրիապէս տրուեր է իրենց:

— Սեպիոյ երեք խնամակալներէն մին, Պ. Բրօթիչ մեռաւ:

— Բարիզու եղեռնադատ տետանը եռամեայ բանտարկութեան, 1.000 ֆրանքի տուգանաց և սոյն դատաւճիռը իւր ծախիւք 80 լրագրաց մէջ հրատարակելու դատապարտեց Պ. Տրիւմոնը որ Հրէից դէմ անուանարկիչ հրատարակութիւններ կ'ընէր:

— Նանսիի մէջ անցեալ շաբթուան հանդէսներու միջոցին Պ. Բառնօ Ռուսիոյ Կոստանդին Մեծ—Դուքսին հետ կէս ժամու չափ համակիր տեսակցութիւն մ'ունեցած է:



ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնաբաշխութիւնք. — Բէռլին փաշա՝ Սուրիոյ կուսակալ, Մէնտէտտին էֆէնտի՝ Ելւմտից նախարարութեան խորհրդական, Սապրի էֆէնտի՝ ընդհ. հաշուակալի օգնական, Արամ էֆէնտի՝ երկրագործական վարչութեան նորակազմ մասնագիտաց դիւանին տնօրէն, Մահմուտ պէյ՝ Գաթթէմուէի մէքթուպօն, Իպրահիմ Հայտար էֆէնտի՝ Օսմանճըքի (Սեբաստիա) նախագահ, Նէշէթ պէյ՝ Գարահիսարը Շարգիլի և Եուսուֆ Ակեհէ էֆէնտի՝ Կեսարիոյ պատմական դատարանաց նախագահ, Համիտ Հիլմի էֆէնտի՝ Կապան Մատէնի (Պարբերդ), Թահսին էֆէնտի՝ Միխալըճի (Պրուսա) և Ապտիւլ Գաթէր էֆ. Պալպէքի (Սուրիա) գայմագամ անուանեցան:

Աստիճանք. — Ամասիոյ կառավարիչ Մէհմետ Ալի փաշայի՝ Բուսէլի Պէյլէրպէյի, Ելւմտից նախարարութեան նախորդ խորհրդական Նամըզ էֆէնտի՝ Պալա, Սուրիոյ մէքթուպօն Շիւքրի պէյի՝ Իւլա առաջին, Ելւմտից նախարարութեան ընդհ. հաշուակալի նորընտիր օգնական Բէշառ էֆէնտի՝ Իւլա երկրորդ, Արաքիլիի գայմագամ Էտիպ էֆէնտի՝ Սանիյէ Միւթէմիյի, Կարնոյ էվգաֆի հաշուակալ Հիւսէյն Հիւսնի էֆէնտի՝ Սանիյէ երկրորդ, Երդնիայի թղթակցութեանց տնօրէն Բիֆաթ պէյի, Երկրագործական դրամատան Պըրուսայի ճիւղի ժողովոյ նախագահ Օսման Նիհատ պէյի և Վանայ կրթական հաշուակալ Բէշիպ պէյի Մալիսէի տաժաճանները տրուեցան:

Պաշտօնաճանք. — Զմիւռնիոյ վաճառականներէն Արապեան էֆէնտի, և Ադրիանուպոլոյ երկրագործական քընիւիչ Ստեփան էֆէնտի Դ. կարգի Օսմանիյէ, Պարբերդի թաղապետական բժիշկ Միւրթէպա էֆէնտի և Գաղատիոյ երկրագործական քընիւիչ Բլավաս էֆէնտի Դ. կարգի Մէնտիլիյէ, Բէօթահիոյ քաղաքային բժիշկ Սալիհ էֆ. Ե. կարգի Մէնտիլիյէ և Նիկոմիդիա—Գաղատիա երկաթուղոյն պաշտօնէից ոմանց և Գարատաղի պատերազմական նախարարութեան պաշտօնէից ոմանց այլ և այլ կարգի պատուանշաններ տրուեցան:

— Պարսի համար բանտարկելոց բաշխուելու սահմանեալ կայսերական նպաստներն յետ այսորիկ դատական ծախքերը վճարելու անկարող պարտապահանջից պիտի բաշխուին:

— Ալիւրեքը քննելու համար քիմիագէտ քննիչներ կարգուած են:

— Մէքսիկա—Պարսու—Ասանայի եր-

կաթնուղւոյն բաժնետէարց ընդհանուր ժողովն անցեալ շաբթու գումարուեցաւ ի Ղալաթիւ : Անցեալ տարւոյ զուտ չա- հը 13112 ոսկի եղեր է : Ընկերութիւնը իւր գիծը թէպէտ մինչեւ Պիւնթիք եր- կարել ուզած , սակայն մինչեւ Գարա- մանիա երկարելն աւելի շահաւոր գըտ- նելով , այդ մասին դիմումներու ձեռ- նարկած է :

— Յունաց Պատրիարքին նուիրած է եփեսոսի մետրապոլիտը՝ Միլան Թագա-ւորն ստացած հովուապետական դա- րազանը :

— Անճնապան եղաւ քսանամեայ Օր . Մաքրուհի Կիւմուշեան , ի Պէշիկ- թաշ իւր տան ջրհորը նետուելով :

— Հայսար-փաշայի զինուորական հիւանդանոցին՝ Վեհ . Սուլթանը հակա- նեխական մեքենայ մը շնորհած է :

— Վանայ Իմատիյէ գաւառակը զըր- կուած է վաշտ մը զօրք , բարեկարգու- թեան պահպանման համար :

— Պասայի մէջ երեւան ելած ժան- տախը թեթեւացած է :

— Համալգայից Անկիլանցից կա- ուղցման համար 100, 20, 10 և 5 զու- ըռնոց նպաստի տոմսեր պիտի բաշ- խուին փախաբողաց :

— Տիգրիս և Եփրատ գետերուն նա- շարկութեան համար Կայս . անձնական Գոնձուն նախարարութեան Պաշտօնի մէջ կազմած ընկերութիւնը Վեհ . Սուլ- թանին հովանաւորութեան ներքեւ առ- նուած և Ն . Կ . Վեհափառութիւնն ալ 1000 ոսկի շնորհած է նոյն ընկերու- թեան :

— Կարնոյ Օվա գաւառակին Իլիճէ գիւղին մէջ տիպար ագարակ մը պիտի հաստատուի :

— Եւմէնի մէջ գործերը լաւագոյն կ'ընթանան և կարգ մը ցեղեր հետզհետէ հնազանդութիւն յայտնելով , Վեհ . Սուլթանի ներողութիւնը կը հայցեն :

— Զմիւռնիոյ Առետրական Սենեկին ընդարձակ հարցարան մ'ուղղուած է Բ . Դրան կողմանէ , գիտնալու համար Փրանսական մաքսային նոր սակացուցին ազդեցութիւնը նահանգին առետրա- կան գործոց վրայ և ի մասնաւորի կա- պերտագործութեան վրայ :

— Զմիւռնիոյ Սիւնի Տէլլաիրտա- թիքա տունը Օսմ . Կայս . Պանքային վա- ճառած էր Ղալաթիոյ Մուսալլա տան վրայ քաշուած չէքէր , զորս Պանքան պահած էր , փոխանակ գանձելու : Արդ , Մուսալլա փախած լինելով , Պանքան Սիւնիէն կը պահանջէ չէքերուն փոխա- րէնը որ կ'առարկէ թէ 24 ժամուան մէջ գանձուելու էին և ինքը պատասխա- նատու չէ : Ութ օրէն դատը պիտի տեսնուի :

— Եփրատէի թեթեւ ու սաստիկ

ցնցումներ կ'զգացուն տեսնէ մ'ի վեր թուրքիոյ այլ և այլ կողմերն , ինչպէս նաև մայրաքաղաքիս մէջ :

— Պէշիքէյի կողմերը խոշոր օձ մը երեւան ելեր է որ երբեմն մարդիկ ու ոչխարաց հօտեր ալ կը հալածէ եղեր :

— Իէժիի Հանրային Պարտուց և Մաքսային վարչութեանց դէտերէն ե- րաշխաւոր առնուելով թէզքէրէ պիտի տրուի :

— Մաղնիսայի Օսմ . Կայս . Պանքա- յին մասնաճիւղը պիտի փակուի :

— Զինուորական վարժարանի շըր- ջանաւարտներէն երեք սպայներ Ռու- սիա կը զրկուին Քօլաքներու մարդա- նաց վարժուելու համար :

— Աւսրիոյ կայսրը 500 ոսկի նուի- րած է Հէյպէլիի Աստուածաբանական վարժարանին զոր այս շաբթու դեսպա- նին միջոցաւ Յունաց Պատրիարքարա- նին յանձնուեցաւ :

— Պրուսայի մէջ նախապէս ջնջուած առևտրական դատարանը վերահաս- տատուելով , Մէլքեճեան էֆ . նախա- գահ կարգուած է :

— Արապսուցի (Գօնիս) գայմագամ թէվիթէ Էֆէնտի , որ դատաստանի են- թարկուած էր , վեց ամսուան բանտար- կութեան դատապարտուած է :

— Կարնոյ Բասթէքէ գաւառակին մէջ առաջատակող Լազ Տուրսուն աւա- զակը ձերբակալուեց է :

— Քէօքանիոյ մէջ ալ մարախ երե-ւան եկեր է :

— Զանձախարիքով ներկ պատրաս- տելու գործարան մը հաստատուելու հա- մար մենաշնորհ խնդրած էր Բայրեքտար գառէ Մէլէմէտ ձէմիլ պէյ , յանձն առ- նելով նաև տանց ծխնեղջերքն ու վա- ռարանաց խոզովակները մաքրել : Փո- խանակ մենաշնորհի , պարզ արտօնու- թիւն մը պիտի տրուի :

— Վաքսուց հալար Փրանք ապրիլ 1ի Ռումէլիի երկաթուղւոյ վիճակահա- նութեանէն շահած է Հալէպի ազգա- յիններէն փաստաբան Տէվլէթ էֆէնտի Բոլաթեան :

— Նամրէ էֆէնտի՝ նախորդ խոր- հըրդական ելեմտից նախարարութեան յատուկ պաշտօնով Ելմէն կը զրկուի :

— Կայս . անճնապան գորաբանակին հրամանատար Բէուֆ փաշայի համար Բարիզէն արհեստական ոտք մը կը բեր- ուի Վեհ . Սուլթանին հրամանաւ և ծախիւք . Ն . Վսեմութեան թոշակին վրայ 10.000 զուռի յաւելում մը եղեր է :

— Օսմ . Ապահովագրական ընկերու- թիւնը որուն մենաշնորհը խնդրած են Ենիի Տիւնես Տիմիթրաքի էֆէնտի , թէևն օպէյ և այլք , կազմուած է 240 հազար ոսկի դրամագլխով :

— Զմիւռնիացի Եորիկ անուն անձ մը առևտուրի համար Հնդկաստան դա- ցեր և ինկեր է վայրենեաց ձեռքն ո- ըռնը նորա մարմինն ամբողջ ծակծկեր և ծակոտիկներուն մէջ կապոյտ ներկ լեցուցեր են , որով Եորիկ իւր գոյնը բոլորովին փոխեր է : Իւր երկու ընկեր- ները այդ տանջանաց չ'ըմանալով՝ մե- ռեր են :

— Քալալայի նաւահանգիստն ըն- դարձակելու խօսք կայ :

— Նիկովիդիոյ պատժական առեսին նախագահ Հիւսէյին Ղալիպ էֆ . որ հին ու նոր կշիռները միանգամայն ցուցը- նող կշիռներ ու չափեր հնարած է , 15 տարուան արտօնութիւն ստացած է :

— Անասօլուի երկաթուղւոյն մինչև Ալքէշոյ շինուած մասին բացումը այսօր կը կատարուի :

— Գաղաթիոյ մէջ երկաթագործ Յով- հանէի կինը 65 ամեայ Մարիամ , իւր 35 ամեայ Կարապետ որդւոյն անվայել ընթացքներէն ազատելու համար , ա- նոր նախ ափսոս և ապա միջոց կըլ- նեցնելով մեռուցեր է : Մարիամ իւր ո- ճիրը խոստովանած և ձերբակալուած է :

— Խարբեղի մէջ նախնական երկ- սեռ վարժարան մը շինուեց է՝ ներքեւ վեց խանութներով :

— Ակնայ և Տիվրիկի միջեւ թղթա- տարական երթեւեկութիւն հաստատ- ուեց է :

— Միջերկրականի Անգլիական նա-ւատորմին հրամանատար՝ ծովակալ Սըր Ճօրճ Թրիօն երէկ առաւօտ մայրաքա- լաքս ժամանեց իւր Սիւրբայք գրօտու- նաւով և զինքը դիմաւորող թալիս չո- դենաւուն հետ : Ծովակալը երէկ Սէ- լամիլքի արարողութեան ներկայ գըտ- նուելէ յետոյ Վեհ . Սուլթանին ներկա- յանալու պատիւն ունեցաւ :

— Պրուսա-Մուսանիա երկաթուղւոյն բացումը հանգիստաւոր չըով կատարուե- ցաւ : Մախուսէի Պէնկազի չոգենաւը երէկ հրաւիրեալներն առնելով միջօրէին մեկնեցաւ մեր նաւահանգստէն և ժամը 8ին Մուսանիա հասաւ : Փրանսական դեսպանն ալ իւր պահակ չոգենաւով գացած էր : Հրաւիրեալը Մուսանիայէն յատուկ կառախումբով Եորիկուր , Գօրը ու Աճէմէր կայարանները հանգիստելով ժամ 11ին Պրուսա ժամաներ են ուր կուսակալը զիրենք դիմաւորեր և գի- շերը 100 հոգւոյ հացկերոյթ մ'է տըր- ուեր կայարանին մէջ : Երկաթուղւոյ գիծն այսօրունէ սկսեալ հասարակու- թեան առջև բաց է և Մախուսէի վար- չութիւնը երեք չոգենաւներ յատկա- ցուցած է իւր Մուսանիոյ գծին համար :

— Տպագրական Տեսուչ անուանեցաւ Արքունեաց դիւանին թագմանի օգնա- կան Վսեմ . Պէհճէթ պէյ :

— Զիւսկոյի արուեստահանգիստն մասնաւորաց զրկած ապրանայ մաքսը հոն ծախուելէն վերջը միայն պիտի առ- նուի : Սոյն արուեստահանգէսը 1893 մայիսին սկիզբը պիտի բացուի :

— Կայս . անճնապան զօրաց հրամա- նատար Բէուֆ փաշայի ձէսը էրքէնէի մէջ ունեցած ածխահանքերը բանեցնե- լու համար արտօնութիւն խնդրած է :

Ա Ր Ժ Է Բ Դ Ր Ա Մ Ո Յ			
Օսմ . լիւրն 100 զըշ էն			
Մէճիտիէ	108	2 Վեցնոց	102 20
Քառորդ մէճիտ	106	30 Բուսիյոյ բօլ	89 30
Մանր մէճիտ	102	40 Կաբուլէն	87 44
Մէթալիք	98	40 Գրիմից	51 45
Հինգնոց	101	30 Անգլ . լիւր	110 3
Մանէթ թղթագրամ 8 88			
Գոնսլիտէ	22	20 Բուս . երկ .	84
Թահվիլ . Օսմ .	83	25 Թաալիյէ	48

ԾԱՆԿԱԶԱՐԴ ԵՒ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ԾԱՆԿԱԿԱՆ ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Նուէր Օգոստոսի 1904 թ. համարի հարցումներ)

(Շար. Գալստիոյ քիւն)

Թէեւ աւելի քաղցր էր ինձ ազատ օգտուի, ծաղկաւորելու և դաւարաւէտ լեռների մէջ որպէս անհոգ այծեամբ խաղաղ ու թռչկոտել, բայց չկարողացայ մերժել նրա խօսքը և նա ձեռնիցս բռնած՝ խմբով դուրս եկանք տանից, թուով աւելի քան քսան հոգի:

Հասնելով քաղաքի կեդրոնը և միտնելով լայն ուղին, որ երկարում էր քաղաքի մի ծայրից միւսը, — այդտեղ ես ապշեցայ: Ամբողջ քաղաքը ոտքի վրայ էր, ամէն հասակի, սեռի և դասակարգի բազմութիւն լցրել էր ուղին: Հագուստից ձեւերի, տեսակների ու գոյների մի համալսարանային հարուստ ցուցահանգէս էր: Ոսկին ու ագամանդը վառվում էին արեւի բեկիկէկվող ճառագայթների տակ և չլացնում նայողի աչքերը: Շուտաւաստ էի, դէպի ուր կամ որին նայել — չգիտէի, ամենայն ինչ հետաքրքիր, ամէն բան տարօրինակ էր երեւում ինձ, որով ամբողջ տարածութիւնը անցայ աննկատելի: Մենք բարձրացանք բլրակի գագաթը: Պարարտ հողը բնութեան խնամքով բուսցրել էր այնքան երբեք չգտնուող զանազան բույսեր, որ ամբողջ տարածութիւնը կարծես ծածկուած լինէր գունաւոր ընտիր գորգերով:

Բլրակի ուղիղ գագաթում բացվում էր մի ընդարձակ տափարակ՝ հովասուն ծառերով ու ծնկաչափ կանաչ դաւարիքով, ուր ինքնաբերական սառն ու վճիռ աղբիւրի շուրջը գալիս ու ժողովում էին մարդիկ:

Այստեղից արժէ դիտել չրճակայ տեսարանները, ուր մի քանի րոպէ պէտք է փոխադրենք մեր հետաքրքիր ընթերցողներին:

Բլրակի ուղիղ ստորոտից սկսվում է երեւան քաղաքը, քառակուսի չափած ու ձեւած փողոցներով, որոնք քաղաքի մի ծայրից սկսուելով, վերջանում են միւս ծայրում: Դա մի կատարեալ դժբախտ է: Ամբողջ քաղաքը ծածկուած է պողպատե ընտիր ծառերով, որոնց մէջից դուրս են ցրցվում նոր ճարտարապետութեամբ կառուցուած գեղեցիկ շէնքեր: Քաղաքի զանազան կեդրոններից վեր բարձրացող եկեղեցեաց գմբէթները իրենց սկիւղային խաչերով և մկրիթների մինարէթները կրկնապատկում են տեսարանների չքերով: Երեւանը թէեւ 16-17 հազար բնակիչ ունի, որ համեմատաբար փոքր քաղաք

ասել է, բայց իւրաքանչիւր մի տուն ունենալով իւր առջև ընդարձակ պարտէզ, բռնում է աւելի քան 5-6 քառակուսի վերստ տարածութիւն, չհաշուելով քաղաքի շուրջը գտնուող ընդարձակ այգիները: Նա արեւմտեան, արեւելեան և հարաւային կողմից չըրջապատուած է կանաչաւէտ և հարուստ բուսականութեամբ օժտուած բլրակներով, և այդ ծաղկաւորելու բլրակաց ընդհանր լաքները գեղեցիկ տեսարան են ընծայում նայողի աչքին: Եւ ամէն տեղ բազմութիւն մեծ ու փոքր խմբերով, ամենքն էլ պէտքով, զարդարուած գոյնզգոյն հագուստներով, որպէս մի-մի շարժուն ծաղկածառեր, — լցրել էին ամբողջ բլրակները: Ինձ թուում էր թէ քաղաքը ամբողջ դատարկուել էր, թէ այնտեղ Հայ մէկը կարելի չէր գտնել:

Արարատեան նահանգի տեսարանը, որ հիացրել է շատ օտար ճանապարհորդներ, դրանով չէ վերջանում: Բլրակի դէպի հարաւ նայող լանջի վրայ կանգնած, նորահարս իմ ուշը դարձրեց դէպի հեռուն:

— Ահա՛ տեսնում ես այն սպիտակ փրփուրով ծածկուած գիծը, ասաց նա: — որ տեղ տեղ լայնանում ու սեղմվում է, որ ամբողջաբար հարսի նման երբեմն իւր դէմքը թաքցնում է դարաւանդների կամ ստուերախիտ ծառերի յետեւ, իսկ երբեմն որպէս հսկայ դուրս է բխում իւր թաքստից, իւր լայն բայց փրփուրից կուրծքը բազմում է ժայռերին, յառաջ բերելով մի տեսակ դժոխային աղմուկ և ձեւացնելով ջրային անդունդներ, ու յորձանքներ... — Դա Զանգի գետն է, Հրազդանը: Նա իւր սնունդը առնելով Գեղամայ լճից (Սեւան), ձեղքելով լեռները, կըռուելով ահագին ժայռերի հետ, մտնում է մեր քաղաքը, զայրացկոտ դիտում է Հասան խանի պալատը, և ծաղկեցնելով երկիրը, կենդանութիւն տալով այնքան գիւղ ու արտերին, իւր վերջին մի քանի կաթիլները հաղիւ թափում է իւր մօր — Արաքսի մէջ, որի մայրական գրկում կարծես գտնում է իւր վերջին հանգիստը:

«Տեսնում ես այն հազիւ նշմարելի սև տափարակը, որ կիսով չափ թագնուած է արեւմտահարաւ բլրակի յետեւ: — Նա Վաղարշապատն է, ուր գտնվում է մեր Սուրբ Էջմիածինը: Այդ վանքը շինեց Գրիգոր Լուսաւորիչը և այնտեղից քրիստոնէութեան լոյսը հիւնարապէս տարածուեցաւ Հայ տոհմային երկրի մէջ, լոյս որ մինչեւ այդ օրը ծածուկ մնացած էր և ջերմեռանդ հաւատացեալների սրտի մէջ միայն գոյութիւն ունէր: Այնտեղ են Գայիանէ,

Շողակաթ և Հռիփսիմէ կուսանաց վանքերը ուր ամիսփուած են նրանց սուրբ նշխարները: Այդ կուսանք հալածուելով Հռոմից, ապաստանեցան մեր բնավայրը, ուր գեղանին կոյս Հռիփսիմէ կնութեան ուղուեցաւ: Կոյսը՝ իւր սէրը, սիրտը և անձը զոհած լինելով երկնաւոր փեսային, մերժեց երկրաւոր թագուհւոյ պատիւը: Առանձնացրած էր ինքն և ճգնաթաւը մատիկ էր... բայց Աստուած օգնութեան հասաւ: սկար կոյսը յաղթեց, կնութեան ուղղը կատաղեց, և երեք կուսանք՝ Ս. Սանդուխտ կուսից յետոյ, քրիստոնէութեան առաջին նահատակները հանգիստացան այդ երկրի մէջ: Պատճառ եղողը կրեց իւր պատիժը, անէծքով Ս. Գրիգորի, որ գտնվում էր Սուրբ Կրիստի մէջ: Նա խեղաքարուեցաւ: Լուսաւորիչը դուրս հանուեցաւ իւր վիրապից, որի առաջ ծուռեց խոնարհելով նա՛ զըրջաց. բժշկուեցաւ... Էջմիածնի Ս. Տաճարի մէջ առաջին անգամ եփուեցաւ Ս. Միւսնը, և շարունակ մի քանի տարին մի անգամ եփվում է մինչև այսօր:

«Նայիր հեռուն: այն փայլուն գիծը սեւ ջուրն է, Մեծամոր գետը, իսկ աւելի հեռուն միւս փայլուն գիծը, որ օձապտոյտ հոսանքով ձեղքում է Արարատեան դաշտը... — Նա էլ Արաքսն է: Այդ գետը, որ իւր կենարար կաթիլներով ոռոգել է Աստուծոյ ստեղծած դրախտը, որ զովացրել է մեր նախամոր ծառաւը, բղխում է բնավայրի արգանդից և գնում հանգչում է Կասպից ծովի մէջ...»

Եւ նա ինձ տանելով խիտ մացառների ետեւ, կանացի ցած ձայնով երգեց համանուն երգից մի քանի տուն: Նրա ձայնը, այն քնքոյշ սրտի լարերից բղխող անոյշ ձայնը, այնքան խոր տպաւորութիւն գործեց սրտիս վրայ, որ այսօր նոյն իսկ կարծես նրա ձայնի կախարդական, ներդաշնակ ելեւէջը հնչվում է ականջիս, հնչվում է առաջին օրուայ սուր և յստակ շեշտերով:

— Այժմ նայիր այն հսկայ լեռներին, երգը վերջացնելով, ասաց նա: — նրանք մեծ և փոքր Մասիսներն են, որոնք այնտեղ կանգնած են որպէս անմահ կոթողներ: Եթէ Աստուած աշունջը չէ խաբում մեզ, — որ երբեք կարող չէ խաբել, — Մասիս լեռը ամբողջ մարդկութեան երկրորդ մայրն է: Համաշխարհային ջրհեղեղի ժամանակ այնտեղ լիւա Նոյեան տապանը իւր փոքրաթիւ բնակիչներով, որոնցից յառաջ եկաւ մարդկութեան այն ահագին բազմութիւնը, որ հանգչում են գերեզմաններում: Եւ ապրում են աշխարհիս շուրջը: Ուրեմն որքան մեծ և երկիւղած հաւատքով պէտք է յիշենք այդ

պատկառելի լերան անունը, որ կապուած է մարդկութեան երկրորդ սերնդի գոյութեան հետ: Վաղորդեան արեւի անդրանիկ ճառագայթները առաջին անգամ ողջունում են նրան. ձիւնը իւր ամբիժ սպիտակութեամբ միշտ քողաւորում է նրա ալեւոր գլուխը, իսկ ամպերը միշտ փառաց պսակ են հիւսում նրա վեհապանծ ճակատին...

Նորահարսը չնայելով իւր մատաղ տարիքին, պատմութիւնից բաւական բան գիտէր: Նա իւր կրթութիւնը ըստացել էր տան մէջ, մի ծերունի ուսուցչից, որի ուր տեղացի լինելը անյայտ էր և որին նախապաշարեալ մարդիկ «ֆարմասոն» էին կոչում ու մերժում նրա տուած «բարեւն» անգամ: Բայց իւր փոքրիկ աշակերտահին կենդանի սպացոյց էր այդ անյայտ և խաւարամիտ մարդկանցից մերժուած ծերունոյ խորին դիտութեան:

Եւ նա պատմեց ինձ շատ բան, մի տեսակի դիւրահասկանալի հէքիաթի ձեւով, որով այդ պատկառելի լերան նըշանակութիւնը աւելի եւս բարձրացաւ իմ աչքում և իմ մանուկ սրտի համար դարձաւ որպէս սրբութիւն:

Այո՛, նա ինձ շատ բան պատմեց. ինձ ցոյց տուեց և Արագածը, որ ընկնում է քաղաքի արեւմտահիւսիսի կողմը և ուր շէշտակի, ակոսածե ձորակների մէջ երեւում էին ձիւնի սպիտակ ու թանձր շերտեր: Եւ այդ Հայ-հեթանոսական քրիստոնէական սրտաշարժ պատմութիւններ բովանդակող լեռներն ու բլրակները չորս կողմից միմեանց գրկելով, իրենց մէջ տեղ բաց էին անում Արարատեան այն հարուստ ու ընդարձակ դաշտը, որ աւելի քան 80-100 քառակուսի վերստ տարածութիւն ունի:

Մինչ ես մանկական խորին հաւատքով յարչաւորուած դիտում էի չըջալից տեսարանները, մեզինք քիչ հեռուն կատարվում էր Ծաղկազարդի նախերգանքը: Հովասուն ծառերի տակ երկու սեռի երիտասարդները խումբ խումբ նըստած, իւրաքանչիւրը իւր ձեռքում բռնած մի փունջ վայրի ծաղիկներ, երգում էին զուտ բնավայրի երգերը, մեծ մասամբ հին հայ աշուղների: Զանազան խմբերի առանձին առանձին երգերը կազմում էին աղմկալի աններդաշնակութիւն, բայց այդ աններդաշնակ աղմուկը նոյն իսկ բեկ-բեկուելով ծառերի և ձորակների մէջ, յառաջ էր բերում սրտայոյզ տպաւորութիւն:

Ծաղկազարդի հանդէսը, որ տեղացիք «ծառզարդար» են կոչում, ունէր և մի այլ նպատակ, երեւանի գեղեցիկ սեռը, կրելով իւր վրայ տնական փակ

կեանքի խոտութիւնը, նա ամբողջ օրով փակուած իւր տան չորս պատերի մէջ, անմատչելի է, որով մասամբ անձանաչ է մնում արական սեռին: Որպէս միւս ժողովրդային կամ եկեղեցական հրապարակական հանդէսները, նոյնպէս և Ծաղկազարդը միջոց է ընծալում երկու սեռի աչքերն ու սրտերը միմեանց հանդիպելու: Երեւանի մէջ մեծաւ մասամբ այսպիսի հրապարակական հանդէսների մէջ են կատարվում աղջիկների ընտրութիւնը: Այս իսկ նպատակով ամբողջ քաղաքի երկու սեռի ամուրիները հրապարակի վրայ են լինում: Բայց այն բաց երես համարձակութիւնը, անպատկառ նայուածքների կամ խօսքերի փոխանակութիւնը, որ մեծ քաղաքներում ընդհանրացած ու քաղաքավարութեան կարգն են անցած, նրանք երեւանի նահապետական բնակիչներին դեռ անծանօթ են: Այո՛, նրանք երգում են, երգում են երգեմն սիրահարական սիրտ շարժող և թաքուն բայց զօրաւոր սիրոյ արտայայտիչ երգեր, բայց համեմատութիւնը միշտ փայլում է նրանց շրթունքի վրայ, ամօթխածութիւնը, պարկեշտութեան այն միակ արտայայտիչ նշանը չառագունում է նրանց դէմքերը...

Ես իսկապէս խորշում եմ տնական փակ կեանքից. այդ կեանքը համարում եմ գլխաւոր խոչնդոտ քնքոյ սեռի յառաջադիմութեան դէպ ի լուսաւորութիւն և ինքնաճանաչութիւն: Անուրանալի է նոյնպէս թէ տնական փակ կեանքի մէջ ապրող և նրա տպաւորութիւնը իւր սրտի, հոգւոյ և զգացողական բոլոր օրգանների վրայ կրող մայրը, իւր մայրական ստինքով ուրիշ բան կարող չէ ներշնչել մանկան, եթէ ոչ այն ստորյատկութիւնները, հոգեկան այն պաւկասութիւնները, որոնց մեծ իրաւամբ դատապարտում է ամբողջ լուսաւոր աշխարհը: Այս յատկութիւններն են, որ մարդկանց մէջ միս ու արիւն դարձած, դարձել են որպէս մարմնացեալ համոզում և կատաղի կերպով կռվում են ընդհանուր լուսաւորութեան և ինքնաճանաչութեան գաղափարի դէմ:

(Շարունակելի) Ա. Յ. Մ.—ԵԱՆ

ՇՐԳԱՐԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ

Ազգային կատակերգակ և անուանի դերասան հանգուցեալ Գ. Հ. Ռչտունիի, Յ. Աճէմեանի, Թ. Նալեանի և այլոց կողմանէ յօրինուած թատերական զուարճալի երգերու և պարերգներու սոյն հատընտիր հաւաքածոյն, որ կը պարուկէ ի մէջ այլոց բարեխառակ Արմենակ Հայկունիի հայերէն լեզուաւ գրած երկնային Վիճակի զուարճալի ասացուածքներն, կը վաճառի 3 դահեկանի:

ԿԱՊԱՂՈՎԿԻՈՅ ԳԱՒԱՌԻՆ

ՀԻՆ ԼԵՁՈՒՆ ԵՒ ՆՈՐԱ ՄԱՐԴԻ ՅՈՒՆԱՐԷՆ

ԳԱՒԱՌԱՐԱՐԱՌԸ

(Շար. Տես թիւ 29)

17) Վերիա. — որթատնիոյ բարունակ, ուռ-բառ Ֆարասացոց: Այս բառն ալ առաջին տեսքով կ'երեւի թէ լատ. virga (վերղա նոր յունարէնի մէջ) է, մանաւանդ որ արդի յունարէնի մէջ վերղա կ'ըսուին սովորաբար ձիւղերն, բազուկներն, ըստ որում վերղա բառը անծանօթ է Ֆարասացոց բարբառոյն մէջ, մինչդեռ հայերէնի մէջ կայ ուռ որ կը նշանակէ լարունակ, բազուկ (բաղդատէ նաև ուռի—էօս աղանք): Ինձ կ'երեւի թէ գուցէ Ֆարասացոց «վերիա» աւելի խնամութիւն ունի հայկականին, առանց սակայն այդու ենթացրելով թէ խնամութիւնը արմատական է կամ մէկ լեզուէն միւսն փոխանցած է այս բառը:

18) Վուրօ'ֆօ կամ վոգօ'ֆօ կամ վու-սօ'ֆօ. նախոր, բառ Ֆարասական: Առաջին հայեացքով այս բառը ազգական է հայերէն բաժակ—գաւաթ կամ հին պարսկերէն վաղիա'ֆի (պարսկական սրուակ) և կամ իս արմատին (իսոր. լատ unda, սլաւ վոսա. փոխգոմարկէզոն' վեթիւ. բաղդատէ հայերէն վսակ—գետակ, առուակ): Բայց որչափ որ այս ստուգաբանութիւնք ենթադրական երեւին, բոլորովին անյաջող չեն, ոչ ալ յոյժ հաւանական: Գուցէ պարսկերէն վաղիա'քի յարաբերութիւն մ'ունի հայ բաժակին. իսկ Ֆարասական վուտօ'քօին հայերէնի մէջ խնամի և համարմատ կ'երեւի ինձ պոլսուկ—սան, սլոյտ, Հաւանականաբար հայերէն սոյն բառը փոխառնուած է կապադովկերէնէն ուր նորէն վուտօ'քօն թերեւ աղաւաղում մը լինի բիւզանդական եմքօ'սիս ին, բառ՝ որ տակաւին մնացած է կապադովկիոյ միւս յունական բարբառներուն մէջ և ընդհանրապէս արդի յունարէնի մէջ:

19) Պաու կամ պավու կամ պաղու (սոյն վերջին ձեւը խիստ հողուադէպ)— յայտնի. բառ Ֆար. : Սոյն բառին արմատն է bha, սանսկրիտ bhāmi — երեւիմ. բակրիտ banu — պայծառութիւն. յունարէն Ֆա'ou, ֆօ'u (լյս), լատ. fari: Հայերէնի, ինչպէս նաև լատինարէնի մէջ սոյն արմատը կը գըտնուի Ֆանէ երեւելի այլաբանական իմաստով բամ — զրոյց բառին մէջ, որպէս նաև վերոյիշեալ պաուֆա կամ պապուֆա կապադովկեան բառին մէջ: Դիտելու արժանի է զի, մինչդեռ կապադովկերէնի մէջ մինչեւ ցարդ պահուած է bha արմատին նախկին նշանակու

թիւնը, հայերէն լեզուի մէջ միայն այլաբանական իմաստը մնացած է:

20) Պապուհա կամ պաուհա — հանելուկ, առասպելական զրոյց ըստ Ֆարասացւոյ: Սոյն բառն վերոյիշատակեալ պաու կամ պապուհէն յառաջ եկած է: Կապաղովեան պապուհա բառն զարմանալի նմանութիւն մ'ունի ստուգաբանութեամբն և իւր նախկին իմաստովն հայ սա բառերուն հետ. բայ, բայքանք fobelhafte wörter (Dervischian Armeniaka 1 երես 44): Բաղդատէ նաև բանկնարկել — վիպել: Բայց կապաղովկերէն այս բառերը հայկականներէ աւելի հին արիական արմատին կը մօտենան:

21) Ղուանի — խոզկաղին (փալանոս). բառ Ֆարաս. հայերէն կաղին, լատ. glans: Թէ՛ հայերէն և թէ՛ կապաղովկերէն այս երկու բառերն ալ լատին glans ին առաւել մօտ կ'երևին քան թէ յունարէն վալանոսին (խոզկաղին). անհաւանական չէ ըստ իս ենթադրել թէ երկուքն ալ այս լեզուաց յատուկ օրինաց համեմատ աղաւաղեալ ձևերն են յունական բառին: (Բաղդատէ Ֆարասացւոյ դոսդարին փոխանակ վլասդարի — բողբոջ):

22) Ղրեվո՛. անկատար եղանակ վրեվ'վա — տեսնեմ. բառ Ֆարաս. Այս բայը որ իւր արմատովն ազգական է յունարէն oro՛, o'ra, լատ. vereor?, գոթերէն vara — տեսնութիւն, Եւքիզեսի վո'rou (աչք)ին հայերէնի մէջ համարմատ է երևիլ, երևոյթ, երևելի, երես ին:

23) Ղուրդիյօ և վուրդա'վօ — կլանել. սանսկրիտ girami, յունարէն վիվրօ'սքօ լատ vorare. յայտնի ազգական հայերէն nrhar և ոկրամոլ ին: » Որկրամոլն արդէն որկորէն ածանցեալ լինելով, աւելորդ ու անճաշ է հոս իրեւ ուրոյն բառ յիշել. աւելի կարեւոր էր հոս առաջ բերել կե, կեբակուր, կուլ և կոկորդ որք դուցէ խնամութիւն մ'ունին կուրդիգօին հետ:

24) Ե'թիօ — ձի (Կապաղովկիւյ մի քանի երգոյ մէջ). Հայերէնի մէջ համանիշ բառն է ձի. Թէ որ բաղդատելու լինիմք սանսկրիտ acva ին, լիթուան aszva ին, հին ռաքսօն ehn ին (տես Pieter I, 428, Բուրտիս 424) կը տեսնենք որ, եթէ կապաղովկէն է'թիօ բառը համարմատ է հայ ձիին, կապաղովկեան ձիւր աւելի մօտ է արիական հասարակաց արմատին քան հայկականը:

25) Ձայիւ, զարի կամ զար — յունարէն դար — վառն զի. բառ Ֆարաս. Հայերէն զի. (բաղդատէ նաև զիարդ — ինչպէս). պարսկ. զիւա — որովհետեւ, յունարէն դար:

26) Ձաֆա, զգեստին ծոցը. բառ

Ֆարաս. յայտնի ազգական է հայերէն ծոցին: Բայց նախնական արմատը, որուն աւելի մերձաւոր է կապաղովկեան բառը, հաւանականաբար պէտք է փնտրուել յունարէն սա'ֆոս, սայիֆի' ին մէջ:

27) Զիղօ'ֆֆօ. բողբոջ. սովորաբար որթատնկոյ ոտն. բառ Ֆարաս. բաղդատէ հայերէն ցցուել, տերեւ արձակել: Իրաւ է թէ «զիղօ'քքոն» իմաստի ու հնչման նմանութիւն ունի ցցուել կամ ցցուիլ (բողբոջ արձակել, ծլիլ, դուրս գալ) ին, բայց և այնպէս անյարմար չէր հոս յիշել նաև ճիւղ բառն, նկատելով որ թէ՛ նշանակութեամբ և թէ՛ արտասանութեամբ եթէ ոչ նոյն, գէթ մօտ է «զիղօքքօ»ին (Յունարէնի մէջ ձ տառը չգտնուելով, մեր ձ կ'արտասանեն չա):

30) Մանօս — մօրոս, յիմար, չանե'վօ — զուարճանալ, չանի'չօ — խենդե'նալ, չանայի'վօ — ծաղրել, ծանակել ըստ Ֆարասացւոյ: Կապաղովկիւյ ուրիշ բարբառներու մէջ կան չանդօ'ս, չանդի'վօ, չանդի'չօ: Այս բառերուն արմատը պէտք է փնտրուել յունարէն սա'հաս — յիմար, լատ. sanna — պարսաւ, sannator — ծաղրածու, sannio — յիմար բառերուն մէջ: Հայերէն ծանակ — ծաղր, ծանակեմ — ծաղրեմ, ծանականամ — ծաղրուիմ հաւանականաբար ազգական են վերոյիշեալ կապաղովկեան և յունալատին բառերուն հետ:

31) Զիա'մես. Աջկանց և ընդհանրապէս կանանց ուսերուն վրայ իջնող մազերու հիւսակներն իրարու կապող ժապաւէնը: Սովորաբար զանազան դրամներ ոսկի կամ արծաթ կը կախուին այս ժապաւէնին ամբողջ երկայնութեամբ. բառ Ֆարասացւոյ: Հայերէնի մէջ կայ ծամ — մազ ծամակալ — մազկալ: Կապաղովկերէն և հայերէն սոյն բառերուն մէջ որոշակի տեսնուող մեծ խնամութեամբն հանդերձ ինձ այնպէս կ'երևի թէ ո'չ արմատը և ո'չ ալ կապաղովկերէն բառին նախկին նշանակութիւնը նոյն են հայկականին հետ: Ֆարասացւոյ զիամես գուցէ աւելի մօտ ազգական է յունարէն իմաս (փոխանակ սիմասի) — փոկ (գայլը, գօլան) ին իրլանտ. siðman, հերսեկ. si-aman — ժապաւէն, անկլօ — սաքսօն si-ma — կապ, սկովտ. seyni — դերձանին հետ. բոլոր այս ամենը հին սանսկրիտ sinomi կամ sinami արմատէն (տես Pieter II, 216): Հայերէն ծավին արմատը ուրիշ տեղ պէտք է փնտրուել. ինչ որ ալ լինի, կապաղովկերէն զիամեսը հայերէնէ չէ եկած:

32) Զուվոյի — գետակ. բառ Ֆարաս. su, sar — ջուր արմատէն կամ սեւ, սու, սե'վօ, սեվօվէ, լիթուանե-

րէն szaunus — արագ, szuvis — կորովէն (Pott I, 43 43—4): Զեմ գիտեր թէ մինչև որ աստիճան կրնամք ենթադրել կապաղովկերէն զուվայի բառին և արիական ուրիշ համարմատներու և հայերէն ծով, ծովակ:

(Շարունակելի)

Ն Ա Ր Հ Ի Մ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

Պ Ա Տ Ի Ժ Բ

Դպրոցական դաստիարակութիւնը՝ որ շատ կէտերու մէջ տարբեր է ընտանեկան դաստիարակութենէն, կարգապահութեան մասին մանաւանդ կ'ընծայէ դժուարութիւններ որոց չհանդուր զաւակն ինքն իւր ձեռքով դաստիարակող ընտանեաց հայրն: Դպրոցին մէջ աշակերտը՝ իրենց ընկերակցաց օրինակէն դրդեալ՝ կը գործեն յաճախ յանցանքներ զորս իրենք իրենցմէ չը պիտի գործէին թերեւս: Պէտք է նաև մտածել որ լուրթիւնն, հլուականութիւն, գրեթէ կոյր հնազանդութիւն մը կարեւոր են, եթէ կ'ուզենք իրական արդիւնք և յառաջադիմութիւն սպասել դպրոցի աշակերտներէն: Պէտք է մտածել վերջապէս թէ դաստիարակն որչափ որ ալ հեղ և ճարտար լինի, դպրոցականաց մէջ միշտ կը գտնուին աշակերտներ՝ որոց համար ապարդիւն կը մնան բոլոր իւր գիշորութեան, իւր հեղութիւնն, իւր ճարտարութիւնն: Այս ամէն պատճառներով, հարկ կը լինի դպրոցին մէջ հաստատել իրական պատիժներու դրութիւն մը: Պատիժները պէտք է լինին կարելի եղածին չափ թեթեւ, բայց այնքան ազդեցիկ՝ որ կարենան սպասուած արդիւնքը յառաջ բերել: Բայց որպէս զի կարգապահական դրութիւն մը լաւ արդիւնք արտադրէ, պէտք է խորհրդածութեան պտուղը լինի այն և ոչ թէ անցողական պարագայներու արդիւնքն: Պէտք է մանաւանդ որ դաստիարակն՝ պատիժ տուած ատեն՝ լաւ համոզուած լինի սա բանին թէ, պատիժներն իրենց նըպատակովը միայն արժէք ունին. ըստ ինքեան պատիժն քիչ արժէք ունի կամ բնաւ արժէք չ'ունի: Այս նպատակն՝ տղուն նկարագիրը բարելաւելն է: Այն ամէն պատիժ որ այս արդիւնքը յառաջ չբերեր՝ կամ գէշ մտածուած կամ գէշ գործադրուած պատիժ մ'է: Բայց առարկուի գուցէ թէ պատիժ մը կրնայ ընտիր լինիլ ըստ ինքեան և իւր նպատակովն, և սակայն մինչև աստիճան մը միայն արդիւնաւոր լինել: Արդ, գգալի մէկ օրէն միւս օր շօշափելի յառաջադիմութիւն պէտք է մեղ: Ահա երկու

սլատիժներ. մին արագօրէն յուղղու-
թիւն և ի բարեկուտութիւն կ'ածէ՝ զա-
շակերտն, միւսն՝ դանդաղ կերպով. կը
վարանիմք կը մնամք թէ՛ զո՞րն պէտք է
ընտրել. երկրորդն՝ որոյ արդիւնքն ու-
րիշներ պիտի վայելեն թէ՛ առաջինն՝
որոյ արդիւնքն մե՛նք պիտի վայելեմք
զառաջինն. Օրինակի համար, գրաւոր
կամ աշխատութեան գոտապարտող ու-
րիշ ու է պատիժ շատ բարոյական նը-
կարագիր ունեցող պատիժ մը չթուի
լինել, մինչդեռ առանձին տրուած յան-
դիմանութիւն մը, կարելի եղածին չափ
ճարտար կերպով և ինչ ինչ պայմաննե-
րու մէջ ի գործ դրուած, կրնայ ապա-
գային ունենալ արդիւնքներ՝ որ մեզ
անծանօթ են, բայց որոց վրայ աներկ-
բայ եմք. Սակայն, գրաւոր պատիժն
հաւանականաբար զաշակերտն զգտաւա-
ցընէ վաղը, մինչդեռ կշտամբութիւնն՝
քանիցս կրկնուելով՝ զայն պիտի զգաս-
տացնէ ապագային. ի՞նչ ընելու է:

Ամէն բանէ առաջ ըսեմք թէ պատ-
ժոյ անմիջական արդիւնաւորութեան
շատ չեմք հաւատար: Մեզ այնպէս կը
թուի թէ պատիժը կրկնուելու է որ
արդիւնաւոր լինի: Բայ աստի, գրաւոր
պատիժ կամ սաստ կրնան բարոյական
հաւասար արժէք ունենալ, երբ պէտք
եղածին պէս տրուին և ահա՛ ինչպէս:

Պէտք է պատժել առանց պատճա-
ռը ըսելու, կամ յանդիմանել ձախողա-
բար: Ինչպէս որ երբ ուզեմք որ մեր դի-
մացինը մեզ հնազանդի՝ մեր տուած հը-
րամաններուն պատճառը կ'ըսեմք, բա-
ցատրութիւն կուտամք, նոյնպէս ալ՝
երբ այս ինչ բանը ընելէ արգիլեմք
կամ պատժեմք զաշակերտն՝ պէտք է
վախնամք բացատրելէ թէ ի՞նչու կը
պատժեմք կամ կը սաստեմք: Ինչ որ
աշակերտը անպատկառ կերպով ռան
բառով կը կոչեն, բարւոք պատժոյ մը
կարեւոր ընկերն է: Հրամայել աշակեր-
տին որ իբր պատիժ նորէն գրէ դասը,
երես մը գիր գրէ անսխալ, քանի մը
տող ստանաւոր գոց ընէ, ասոնք ան-
միջական օգուտ ունեցող բաներ կրնան
լինել. բայց պատժուած աշակերտին չը
հասկցնել բուն նպատակը պատժոյն, որ
միանգամայն դաս մ'է արդարութեան
(յանցանքին կը հետեւի պատիժ), դաս
մը խոհեմութեան, փորձ մը բարոյական
բարւոքման, չհասկցնել քանի մը բա-
ռով և մեկին այս նպատակն, կ'ըսեմք,
մեծ յանցանք է՝ կարծեմք՝ դաստիարա-
կաց: Գուցէ այս յանցանքին՝ որ շատ
սովորականէ խակ դաստիարակաց՝ հե-
տեւանօք է որ ստէպ կը պատժեն, ա-
ռանց մտածելու իրենց ըրածին կարե-
ւորութեանը վրայ: Ուստի պատիժը
այն ատեն օգտակար կը լինի և բարո-
յական նկարագիր մը կ'ունենայ երբ,

գործուած յանցանքը դարմանելով
հանդերձ՝ ներկային մէջ, զապագայն կը
պատրաստէ, կը մղէ զաշակերտն անգամ
մ'ալ չգործելու նոյն յանցանքն, գոր-
ծուած պակասութեան կարեւորու-
թիւնն, հետեւանքներն, և այլն, ցոյց
կուտայ:

Եթէ աւելցնեմք այս ընդհանուր նը-
կատողութեանց վրայ թէ պատիժը
պէտք է արդար լինի, պահանջուած
պայմանաց մէջ գործադրելի, աշա-
կերտին մտաւորական յառաջադիմու-
թիւն մ'ընել տալու յարմար, թուած
կը լինիմք այն զանազան հանգամանք-
ներն զոր պարտի ունենալ՝ կարենալու
համար լինել հզօր օժանդակ մը դպրո-
ցական և բարոյական կարգապահու-
թեան:

Բայց դժուար է աղէկ պատժել:
Նոյն իսկ եթէ այս պայմաններն ալ
միացուցած լինի իւր վրայ, դարձեալ
պատիժը չհասցնէր զգաստիարակն իւր
նպատակին: Բանի՝ անգամներ իւր հե-
ղինակութիւնը կը տկարանայ, կը նուա-
զի, կը վտանգի իւր, և դպրոցականին
միջեւ տեղի ունեցող այս կռուոյն մէջ,
եթէ՛ պատժած ատեն՝ բուն կրից ան-
սայք, ձեր բարկութիւնը գոհացնելու
համար պատժել կ'երեւիք և պատժոյ
նպատակն վրէժխնդրութիւնը լինել կը
թուի: Եթէ թեթեւ յանցանքի մը հա-
մար ծանր կերպով պատժէք՝ անար-
դար կ'երեւիք. եւ ստուգել, խիստ
դժուար է պատժել հեզութեամբ և ար-
ժանապատուութեամբ առանց վրդերկա-
նալու դպրոցականին աշաց տուէլ, որ
շատ ճարտար է մեր նկարագրին նուրբ
երանգներն հասկնալու մէջ, և որ՝ սա-
կայն՝ անփորձ լինելով, չկրնար արտա-
քին երեւոյթէն անդին թափանցել:

Հետեւաբար, պատժել դուն ուրեք
և առանց բարկութեան, յանցանքին
և պատժոյն մէջ պատշաճ համեմատու-
թիւնը պահել, այնպէս ցուցնել թէ
պատժողն ալ կը ցաւի պատժելու ստի-
պուած լինելուն, այնպէս որ պատիժն
վրէժխնդրութեան երեւոյթ չ'ստանայ,
ասոնք են՝ ըստ մեզ՝ յարմար միջոցնե-
րն ի գործ դնելու պատժելու մէջ,
որպէս զի տուած պատժոյն փոխարէն
դաստիարակը չտուծէ իւր արժանա-
պատուութիւնն որ կարեւոր է այն ա-
մէն վարժապետի որ յարգուիլ կ'ուզէ:

(Լ. Տէմէզով) Զ. Թ. Հ.

ԱԶԴ ԵՄԱՂԻԿԻ
Կը խնդրուի «Ծաղիկ» թատեր-
դադրութենէ պարտք ունեցող մեր գա-
ւառացի թատերադերձն՝ վճարել ընդ-
փոյթ:

Պ Ի Տ Ո Ն Ի Խ Ր Ո Տ Ն Ե Ր

Մուտակաց պահպանում. — Զայնս
մեծ զգուշութեամբ թօթուելէ և թե-
թեւօրէն ծեծելէ վերջ, դրէք այնպիսի
ստուարաքարտէ տուիլի մէջ որուն յօ-
դամաներն լաւ մը գոցուած լինին սո-
սընձաթղթով: Տուիլը գոցելէ առաջ
մի՛ մոռնաք կրկնաձալ լաթ մը փռել
մուշտակներուն վրայ, սուփին երեսը,
այնպէս որ կախարիչը դրուած ասեն
դժուարաւ սեղմափակուի: Դ վերջոյ
պէտք է սոսնձաթղթի երկզներով խը-
նուլ կախարչին ամբողջ չըջատար:
Այլ ևս երբէք մի բանաք զայն՝ մուշ-
տակներն բաց օղին դնելու մտօք, այլ
ընդհակառակը գոց պահեցէք մինչեւ
գալիք եղանակն:

Այս հնարքով առ հասարակ կարելի
է պահել բրդեղէններն ևս:

Ոմանք քաղուրի՝ կամ կիպարիսի
փայտէ (սէրվի) սնտուկներու մէջ կը
դնեն ուտիճներէ գերծ պահելիք ա-
ռարկայներն. բայց այդ կերպը բաւա-
կան մեծածախ է և վեր՝ չատերու կա-
րողութենէն:

Իրգույթ մորթոյ. — Հետագայ օժա-
նակն գերազանցապէս ընտիր ու եղա-
կան է մորթը կալիւլու, անոր թեթեւ
այրուքն ու հուրքն առնելու, ի մի բան
վերնամաշկին բոլոր զգրգուութիւնը
բառնալու համար:

Կիտաճարպ	70 կրամ
Զհալեցուած մեղրամոմ	30 »
Նուշի իւղ	300 »
Վարդաջուր եռապատիկ	60 »

Ասոնք իրար խառնելով մաղմաղի
վրայ դրէք՝ մինչեւ որ ամէքն ալ լու-
ծուին. յետոյ անկանի մը մէջ լեցու-
ցէք և խնամով յարելէ վերջ՝ աւելցու-
ցէք նաեւ Բնաբիւն 2 կրամ:

Սոյն օժանակն որքան ծեծուի՝ այն-
քան աւելի կ'սպիտականայ, որով լա-
ւագոյն կը լինի ստացուելիք արդիւնքն:
Ապա դրէք զայն ամաններու մէջ որք
քիմիագործական մէթոտով պարտին
գոցուիլ մագաղաթիւ:

Սեւ յարդափեղդոյր մալեւել. — Նախ
գլխարկին իրին ունենալու համար
զայն կալուիլ վրէժնով խողանակելէ յե-
տոյ, պէտք է մուշտակն խցանով — որ
թաթխուած լինելու է ոգիով — սրբել,
որպէս զի վրայի էջերը բոլորովին ան-
հետանայ: Ապա հետագայ խառնուրդը
պէտք է քսել գլխարկին. — մէկ դա-
ւաթ եղի ջուրի մէջ դնել դգալ մ'ա-
ջիւր (dextrine)՝ երբ ստի լաւ մը լու-
ծուի, մէջը դրգալ մ'ալ սեւ մեղան ա-
ւելցունել: Այս բաղադրութիւնը գոր-
ծածելով՝ յարդափեղդոյն նորի պէս գե-
ղեցիկ ու անճկուն կ'երեւի:

Թարգմ. Թ. ԱՊԱՐԵՆԱՆ

ԱՐՏՕՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱՑԵԱՆ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Էսկի-Զուպթի փողոց, թիւ 61

ԼԱՎԸՆԻՌ ՏԷ ՖԱՄԻՅԼ

(Ընտանեաց ապագայն)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓՈԽԱԳԱՐՁ ԸՆԿ.

ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ

ԴՐԱՄԱԴԼԵՈՅ

Կը գործէ ընդ հսկողութեամբ Գաղղիոյ
կառավարութեանԿեդրոնատեղի՝ 61, Բէփուպլիք փողոց,
Լիոն (Ֆրանսա)

Առաջնակարգ Գրաստութեան 100,000 000 ֆր.

ԼԱՎԸՆԻՌ ՏԷ ՖԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ, որ հաստատուած է նպատակաւ համար փոքր խնայողութեանց, արագ զարգացում մը ունեցած է: Իւր նպատակն է որոշեալ պայմանաժամի մէջ վերականգնել գրամագլուխն:

Ընկերութեան գործառնութիւնը բազմադիմի են, ինչպէս շարժական արժէից և փոխ տրուած գրամագլուխոց ապահովագրութիւն, կորուսեալ գրամագլուխոյ մը վերականգնութիւն: Երաշխաւորութիւնը և Գլխավարը՝ փոխառութեանց և ճարտարութեանց և վաճառականութեան մէջ գործածուած դրամագլուխոց, մանկանց համար օժիտք, հանգստեան սնտուկ ծերութեան համար, ցկեանս եկամուտներու կազմութիւն, ի մի բան այն ամէն գործառնութիւնը որոց նպատակն է խնայողութիւն: Ընկերութեան Պոլսոյ գործակալութիւնն սկսած է 1884 Յունուար 1էն:

Տեղեկութեանց եւ բաժանորդագրութեան համար գլխաւ առ Բարսեղ Էփէնտի Թէլլեան, գործակալ Ընկերութեան ի Կ. Պոլիս, Պահճէ—Գաբու, Շէյխ—Իսլամ խան, Թիւ 11:

Կ Ա Ր Մ Ի Ր Մ Ա Ն Ա Ծ

Գաւառներէն «Ծաղիկ»ի Յանձնակատարութեան Գրասենեկին ապսպրուած մանածն մինչև ցարդ կը վնէինք մայրաքաղաքիս հրապարակէն: Պատիւ ունիմք յայտնելու այժմ մեր գաւառացի բազմաթիւ յաճախորդաց ու թղթակցաց որ, չնորհիւ եւրոպական առաջնակարգ գործարանի մը հետ մեր նոր ինորոյ հաստատած յարաբերութեան, կարող պիտի լինիմք յետ այսորիկ հայթայթելու կարմիր մանածն յոյժ գոհացողիչ գիներով, գնումները կատարելով ուղղակի արտադրող գործարանէն և ապրանայ հակերը եւրոպայէն ուղղակի զրկել տալով ուզուած նաւամատոյցները: Նմաններ և մանրամասն տեղեկութիւններ կը զրկուին փափագողաց: Կը բաւէ զրկել միայն թղթատարի ծախքն:

ԳԱԽԱՌԱՑԻՈՅ ՀԱՄԱՐ ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

Գաւառաց մէջ շատ անգամ կը պատահին այնպիսի դատեր ու գործառնութիւններ որոնք, իրենց բնութեամբ և ըստ օրինի, Պոլիս փոխադրուելով միայն կրնան շարունակուիլ և իրենց լուծումը գտնել: այս կարգէն են վաճառքն Ատենին ներկայանալի դատերը (թէմիզ), օտար հպատակաց հետ դաւառաց մէջ տեսնուած դատերուն վերաքննութիւնը (խսքինաֆ), Թէսթաքք Շէրի վերաբերեալ դատեր, Ֆէթիվահալէի վերաբերեալ գործեր, և այլն, և այլն:

Գաւառացիք յաճախ պարտաւորուած կը լինին այսպիսի դատերու և գործերու համար ի Պոլիս փոխանորդ մը կարգել իրենց, բայց դիւրութիւն չունենալով ճանչնալու մայրաքաղաքիս փաստաբանաց բազմութեան մէջ վստահելիները ու ձեռնհասները, հազար դժուարութեանց կը հանդպին, և յաճախ անկարող կամ անփոյթ մարդոց գործ յանձնելով, վերջ ի վերջոյ կը կորուսանեն իրենց իրաւունքը:

Դատական այս կարգի խնդրոց մէջ գաւառացւոց ծառայութիւն մը մատուցանելու համար, «Ծաղիկ»ի Յանձնակատարութեան Գրասենեակը կապակցութիւններ հաստատած է մայրաքաղաքիս ամենէն ձեռնհաս փաստաբաններէն մի քանիին հետ: Կը հրաւիրուին այս կարգադրութեանց օգտուիլ նոքա որք այդ տեսակ գործեր ունին:

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ****ՀԱՆԳԵՐՁ**

ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ ԳՈՒՆԱԻՈՐ ՏԱԽՏԱԿՕՔ

Ի ՊԵՏՍ

ԱԶԳԱՅՎՆ ՎԱՐՃԱՐԱՆԱՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Բազմաթիւ ուսուցիչք և վարժարանաց Տնօրէնք սոյն դասագրքին հրատարակութեան փութացումը խնդրած լինելով, կը յայտարարեմք թէ տպագրութիւնն աւարտած է և այս պահուս Պաշտպանական տպարանը կ'ըստի գրքին մէջ զետեղուելիք աշխարհացոյց գունաւոր տախտակաց պատրաստութեամբ:

Ձանազան վարժարաններէ եղած ստիպողական խնդրանքներուն գոհացում տալու համար, սոյն դասագրքը այժմէն իսկ հրապարակ ելած է և յանձնարարութիւնը սկսած են կատարուիլ՝ աշխարհացոյց տախտակներն յետոյ առանձինն զրկուելու պայմանաւ: ամէն ոք կարող է գանձել դասագրքին մէջ ինքնին զետեղել:

Դասագրքիս կանխաւ որոշուածէն շատ աւելի ստուար և բազմաժախ եղած ինքելով, առ այժմ պիտի վաճառի ի գին 4 զրչ, իսկ աշխարհացոյցներու տպագրութիւնն աւարտելէ յետոյ 6 զրչ: Մեծաքանակ յանձնարարողներու համար՝ աշխարհացոյցներն յետոյ առանձինն պիտի զրկուին, կը բաւէ որ 2 զրչ տարբերութիւնը վճարուի:

Դասագրքիս օգտակարութեան մասին խօսիլն ունելով, կը համարեմք, ուսուցչաց թողով գնահատել այն բանաւոր և դիւրուսոյց եղանակն որով աշխարհագրութիւնն աւանդուած է այս Դասագրքին մէջ, տպագրութեան, թուղթին, պատկերներու և աշխարհացոյցներու գեղեցկութիւնն, Օսմանեան Պետութեան համար տրուած ընդարձակ բաժինը, մանաւանդ այն մասնաւոր պատկերացոյց տախտակը որուն մէջ յոտախօրէն ի տես եկած են ցամաքաց և ջուրց զանազան ձեւերն, որոց առընթեր գունաւոր գծագրութիւններով ցոյց տրուած են նաեւ թէ ինչպէս կը գծուին կամ կը ներկայացուին անոնք աշխարհացոյց տախտակներու վրայ, բան մ'որ բոլորովին նորութիւն է և, գործոյն ուրիշ առաւելութեանցը հետ միանալով, կրնայ այս դասագրքին իւր տեսակին մէջ միակը հանդիսանալ:

HOTEL DE PARIS

BUDAPEST, - Vazi-koor

Պիւտաբէշթ քաղաքի ամենագլխաւոր կեդրոնի վրայ հաստատուած այս առաջնակարգ հիւրանոց ամէն յարմարութիւն ունի ճանապարհորդաց հանգստութեան համար: Խոհանոց եւրոպական և թրքական: Թուրքիացի ճանապարհորդք այս հիւրանոցը կ'իջևանին: Գիները դիւրամատչելի: